6. Ի՞նչու ձմեռը սաղավարտավոր ԲՆ հակագազի արտաշնչման կափարիչի շրջանակի վրա պետք և մահութե տապրակ հագցնել:

7. Ի՞նչպես դիմակի ակնոցները պաշտպանները քրտնելուց:

8. Ի՞նչ չափսի սաղավարտն (գիմակը) և համապատասխանում ձեր գլուխ չափին:


9. Ի՞նչպես հավաքել նոր ԲՆ հակագազը:

10. Վերորք են ԲՆ հակագազի հետ ինամբով վարվելու հիմնական կանոնները:

2. ԲՆ ՀԱԿԱԳԱԶԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ոգտագործելիս հակագազը կրում են յերեք դրությամբ՝
ա) «յերթային» (նկ. 12), բ) «պատրաստ» (նկ. 13), գ) «մարտական» (նկ. 14):


Հակագազը «յերթային» դրույյամբ կրում են, յերբ քիմիական հարձակման վտանգ չկա (պատերազմի ժամանակ հակագա-



Նկ. 12. «ՅԵՐԹԱՅԻՆ»
ԴՐՈՒԹՅՈՒՆ



Նկ. 13. «ՊԱՏՐԱՍՏ»
ԴՐՈՒԹՅՈՒՆ




Նկ. 14. «ՄԱՐՏԱԿԱՆ»
ԴՐՈՒԹՅՈՒՆ

զը շարունակ հետը պիտի ունենալ): Այդ դրության ժամանակ հակագազը պիտք ե լինի ձախ կողքին: Փոկը՝ աջ ուսի վրայով անց կացը: Պայուսակի վերին յեղը՝ գոտու մակարդակին: Պայուսակի կափարիչը պետք ե կոճկած լինի և դարձրած գեղի գուրս՝ դաշտը: Հակագազի ակնոցների ապակիները՝ «մատիտով» քսված: Սաղավարտի մատնաձև պտուկը պետք ե խրված լինի սաղավարտի ներսը: Քուղը պետք ե անցկացը լինի ձախ ողակի միջով, կծկած և դրված պայուսակի մեջ: Չի կարելի հակագազը կրել վորևէ հագուստի տակից, վորովինետե այդ դեպքում հակագազ հագնելը խիստ կդժվարանա և շատ ժամանակ կպահանջի:

Հակագազը «պատրաստ դրույյան» և բերվում «ողային տագնապ» աղղանշանով և հակառակորդի ցամաքային քիմիական հարձակման անմիջական սպառնալիքի ժամանակ:

Այդ դրությամբ հակագազի պայուսակի կափարիչի կոճակը

պիտք ե քանդված—արձակված լինի, գլխարկը պատրաստված լինի արագ հանելու համար (կզակն աղատված լինի գլխարկի կապից, ինչպես նաև գղակի ականջների կապիչներից և այլն), քուղը պայուսակից հանգած լինի, բացված իրանի շուրջը փա-



Նկ. 15. Հանել սաղավարտը պայուսակից, բռնելով նրա հաստացը դրությունը



Նկ. 16. Սաղավարտը մոռեցնել դեմքին


թաթված և աջ ողակի վրա պինդ կապված լինի այնպես, վորմարդու շարժման ժամանակ հակագազը չափնված դրությունն է:

«Մարտական» դրույյանը հակագազը հազնված դրությունն է: Հակագազն այդ դրությամբ կրում են բոլոր դեպքերում, յերբ շրջապատող ողում թիւ են յերեսում, կամ զգացվում ե արտասովոր հոտ: Հակագազն իսկույն եեթ «մարտական դրության և բերվում, հենց վոր հայտաբերվում ե հոտ (կամ գրգռող ազդեցություն), վորը թույլ ե տալիս յենթադրելու, վոր ողում թիւ մկա, և «քիմիական տագնապ» աղղանշանով:


«Մարտական» դրության ժամանակ սակա նակարածնել գլխարկը սաղավարտը (զիմակը) պետք ե հատած լինի գլխին, գլխարկը՝ սաղավարտի վրա: Մնացածը պետք ե լինի նույն դրությամբ, ինչ վոր «պատրաստ դրության ժամանակ»:

Պըսպիս կանոն հակագազը պետք ե «մարտական դրության բերվի «պատրաստ» դրությունից, և միայն հակառակորդի հանեկարծակի քիմիական հարձակման դեպքում ստիպված են լինում հակագազը «յերթային» դրությունից հագնելը:

Առաջին դեպքում պետք ե ոգտվել հետևյալ ձևերով. ա) պահել չնչառությունը, բ) աղատել ձեռքերը, գ) հանել սաղավարտը (զիմակը), բռնելով յեղբերը կզակի մասին մոտ՝ բութ մատները.



զըսից, իսկ մնացած մատները՝ ներսից (նկ. 15), դ) սաղավարտը (դիմակը) մոտեցնել դեմքին, առաջ բերել կղակը, այն կոխել սաղավարտի մեջ (նկ. 16) և, մատները սաղավարտի յեղբերով ցածից վեր շարժելով (դիմակի ստորին յերիդների տակով), բարձրացնել գլխարկը բթամատներով և ցուցամատներով (նկ. 17), մնացած մատներով սաղավարտը (դիմակը) քաշել գլխին, շարութակելով պահել գլխարկը գլխի վրա և հագնելով նրանից հետո:



Նկ. 18. Ուղեկ սաղավարտը



Նկ. 19. Սաղավարտավոր հակագաղի ակնոցների սրբելը

յերբ սաղավարտը (դիմակը) հագնված լինի. ե) կատարել կըտրուկ արտաշնչում (սաղավարտավոր հակագաղում նախապես ձախ ձեռքով սեղմել միացնող խողովակը փողակի մոտ), վերսկսել նորմալ շնչառությունը:

Յեթե սաղավարտը (դիմակը) հագնելիս ակնոցները աչքերի դիմաց չգան, ակնոցների շրջանակները սեղմեն ճակատը, սաղավարտի վրա ծալքեր առաջանան կամ յերիդները սխալ դրության մեջ լինեն, պետք ե ուղեկ սաղավարտը (դիմակը), ձեռքի ափերով զգուշությամբ տեղաշարժելով ուժինը, փողակը կամ յերիդները (նկ. 18):

Յեթե ձեռքի ափերի ոգնությամբ սաղավարտը (դիմակը) ուղեկ չհաջողվեց (որինակ՝ խիստ ուժեղ թեքվածքի գեպքում), այն զեպքում պետք ե շունչը պահել, սաղավարտը (դիմակը) արագ հանել և նորից հագնել:

Սաղավարտի ակնոցները քրտնելու գեպքում ձախ (աջ) ձեռքի բութ մատը մտցնել մատնաձև պտուկի մեջ և սրբել աջ (ձախ) ապակին:


Յեթե այդ դեպքում յերկու ձյուքն ել աղատ են, մեկով պետք ե բոնել սրբվող ապակու շրջանակը (նկ. 19):

Հակագաղը պառկած հագնելիս, կարելի յե նախորոք շուռ զալ կողքի կամ մեջքի վրա: Վորպեսպի կարելի լինի սովորել հակագաղը զիշերն ողտագործել և հակառակոր-

դի կողմից հանկարծակի արտասվարեր աղղեցություն ունեցող թշնամություն է գեղքում անհրաժեշտ և վարժվել ու սովորել հակագաղը փակ աչքերով հագնվել:

Հագած հակագաղի մեջ պետք ե շնչել հավասարաչափ, խորը, շնչառումը կատարել քթով:

Հակագաղն անմիջապես «յերթային» գրությունից հագնվելը



Նկ. 20. Հանել սաղավարտը



Նկ. 21. Սրբել սաղավարտը

կատարվում ե նույն ձեռի միջոցով, միայն ավելացվում ե պայտակի քանդելը և, —յերբ հակագաղն արդեն հագնված ե, —քռւագով իրանին այն ամրացնելը:

Հակագաղը հանում են այսպես. ա) աղատել ձեռքերը. բ)



Նկ. 22. Ծալել սաղավարտը

ձախ ձեռքով բռնել փողակը, միաժամանակ բութ մատով և ցուցամատով բռնելով սաղավարտի (դիմակի) ստորին մասը. աջ ձեռքով բարձրացնել գլխարկը, իսկ ձախ ձեռքը փողակով քաշել առաջ և բարձրացնել վեր այսպես, վոր կղակն աղատվի սաղա-

վարտից (դիմակից) և սաղավարտը (դիմակը) հանել գլխից (նկ. 20). հագնել գլխարկը. գ) սաղավարտը (դիմակը) շուռ տալ հազարակ յերեսով, թաշկինակով կամ շորով չորացնել նրա ներքին մասը, ակնոցները, բըջանակները և փողակի վերին մասը (նկ. 21) վորից հետո սաղավարտը (դիմակը) վորով ժամանակ թողնեք բաց դրությամբ՝ վերջնականապես չորանալու համար (ձմեռը դնել ծոցը). դ) աջ ձեռքով վերցնել սաղավարտը (դիմակը) ակնոցներից, իսկ ձախով՝ վերին հաստացրած յեղից (դիմակը ծոծրակապահից), ձալել սաղավարտը (դիմակը) (նկ. 22)՝ յերկոտակ (յերկայնքով), փակելով աջ ապակին, լայնքով, սաղավարտի ուղղինով կամ դիմակի ծոծրակապահով փակելով ձախ ապակին, փողակի մոտ, դեպի դաշտը (իրենից), ե) միացնող խողովակը ձախ ձեռքով դնել պայուսակի փոքր բաժանմունքը մինչև հատակը, իսկ աջ ձեռքով վերհից դնել փողակը սաղավարտով (դիմակով) արտաշնչման կափարիչի նախապաշտպանական շրջանակը կամ պաշտպանական տուփը պետք են լինի ձախ կողմից, իսկ սաղավարտի (դիմակի) կլանային մասը՝ վերեից այնպիսի դրությամբ՝ վորպեսզի հագնելու ժամանակ հեշտ լինի յերկու ձեռքի մատները միանդամայն դնել նրա մեջ:


Խճախ ոգևիել հակագաղուկ նրա հանկարծակի
փշանալու դեպքում

Հսարավոր են այնպիսի դեպքեր, յերբ թունավորված ողի մեջ ողտագործելու ժամանակ հակագաղը հանկարծակի փշանումներ (պատովում են սաղավարտը, կոտորվում են ակնոցները, պայթած ոռութի մանր բնկորներից ծակվում են տուփը և այլն): Այդպիսի դեպքերում պաշտպանության լավ ձև ընտրելու համարնախ և առաջ պետք են վորոշել, թե հակագաղն ինչ վկավածք է ստացել:

Օերե պատռվել և սաղավարտը (դիմակը), պետք են պատուված տեղը մատներով սեղմել կամ ձեռքի ափով պինդ սեղմել դեմքին (նկ. 23):

Խոկ յերե սաղավարտը (դիմակը) այնպիս և պատուված, վորպատռված տեղը ձեռքով փակել հետառվոր չե (կտմ յեթե ակնոցները ջարդված են), ապա պետք են շունչը պահել աչքերը փակել սաղավարտն արագ հանել, ծոել ուղինը փողակի մոտ, փողակը սեղմել բերնին, քիթը փակել ձեռքով և շնչել բերնով՝ տուփի բլիցոցով (նկ. 24):

Կարելի յե դիմել նաև պաշտպանության ուրիշ ձեր՝ պահել շնչառությունը, հանել սաղավարտը, միաժամանակ աչքերը փակելով. միացնող խողովակը հանել տուփից, տուփը հանել պայունակը.



Նկ. 23. Ձեռքի ափով պինդ սեղմել պատռված տեղը




Նկ. 24. Փողակը սեղմել բերնին, մատներով քիթը սեղմել և աչքերը փակել

սակից, բուկն առնել բերանը, և, ձեռքով քիթը փակելով՝ բերնով հանդարտ շնչել (նկ. 25): Յեթե տուփն ստորին անցքում շնչառական կափարիչունի, ապա թե առաջին և թե յերկորդ ձեր ժամանակ պետք են մատով բարձրացնել կափարիչի սեղինե կլո-



Նկ. 25. Բուկն առնել բերանը, փակել քիթն ու աչքերը




բակը և հետագա ողտագործելու ընթացքում հակագաղը պահել այդ գիրքով՝ փոխանակ մատով կլորակը բարձրացնելու, յեթե հնարագոր ե, կարելի յե կլորակը բարձրացնել նրա տակը վորեա ձողիկ, որինակ՝ լուցկի մտցնելով (նկ. 26):

Յեթե շնչառության կափարիչը գտնվում է տուփի բկում, ապա այն նախորդը հեռացնում են (այդ դեպքում կարելի յետուփել միայն յերկրորդ ձևով, այսինքն՝ շնչել անմիջապես տուփի միջով):

Միացնող խողովակի փանակում գործադրում են անմիջապես տուփի միջով շնչելու արդեն նկարագրված ձեզ:

Յերեւ սաղավարտավոր հակագաղի արտաքինական կափարիչը ԹԱՆ և ներս բռնում, պետք եւ պահել շնչառությունը, ձախ ձեռքի բթամատով փակել փողակի



Նկ. 27. Բթամատով փակել փողակի յերապես, փորի վրա ամրացված է կափարիչը

Նկ. 28. Ձեռքի ափով փակել անցքը, հետո ծեփել կավով կամ հացով

յերապես, փորի վրա ամրացված եւ կափարիչը (նկ. 27), խոր արտաշնչել և շարունակել հանդարտ շնչել (արտաշնչած ողը դուրս կցա սաղավարտի տակից ականջների մոտով):

Յերեւ դիմակավոր հակագաղի արտաքինական կափարիչը ԹԱՆ և ներս բռնում, պետք եւ ձեռքի ափով պինդ փակել արտաշնչման կափարիչի պաշտպանական տուփը (տակից). այդ դեպքում ձեռքի բոլոր մատները պետք եւ ընդգրկեն կափարչային տուփի ծալված յեղը. միացնող խողովակն ընկնում եւ ցուցամատի և միջամատի միջև. Այս գեպքումն ել կարելի յետուփել անմիջապես տուփի միջով շնչելու ձևով:

Յերբ առվին և ծալված բեկորով կամ գնդակով, պետք եւ տուփը հանել պայուսակից և ձեռքի ափով փակել անցքը (նկ. 28), առաջին հնարավորության գեպքում պետք եւ անցքը ծեփել կավով, ճմուած հացով և այլն:

Յեթե պաշտպանության վերոհիշյալ բոլոր ձեռքը չեն ոգնում և թն այնուամենայնիվ հակագաղը մաղում եւ, նշանակում

եւ սարքին չեն կլանիչը: Պաշտպանելու համար պետք եւ պահել շնչառությունը, թրջել թաշկինակը, փալասը և գնել քթի և բերնի վրա, նշաններով ընկերներից խնդրել պահեստի հակագաղ:

Խնձափես բունավորված ողում տնօտք հակագաղը փոխել սարքինով

ա) Պահել շնչառությունը. բ) հանել նոր հակագաղի սաղավարտը (դիմակը) պայուսակից. գ) փակել աչմերը յեզ սովորական ձեռքով հանել անօտք հակագաղի սաղավարտը (դիմակը). դ) առանց աչքերը բանալու հագնել սարքին հակագաղի սաղավարտը (դիմակը) և, ուժեղ արտաշնչելով (սաղավարտավոր հակագաղում) նախորդը փողակի մոտ փակել միացնող խողովակը), վերսկսել շնչառությունը. ե) հանել մասսաված հակագաղի պայուսակը. զ) հազնել նոր պայուսակը և այն բերել «պատրաստ» գրության (փոխանակ պայուսակը հանելու, կարելի յետու պարզապես նոր հակագաղի տուփը գնել անսարք հակագաղի հագած պայուսակի մեջ:

Առաջին հնարավորության գեպքում պետք եւ ոգտվել ընկերոջ ոգնությամբ, վորը պետք եւ հանի պայուսակից հակագաղի սաղավարտը (դիմակը), մոտեցնի հակագաղը փոխողի դեմքին և ոգնի նրան փոխել պայուսակը (գնել նոր հակագաղը անսարք հակագաղի պայուսակի մեջ):

Աթուգիչ հարցեր

1. «Յերթային» դրությամբ հակագաղն ի՞նչպես են կըում:

2. Ի՞նչու հակագաղը հագուստի տակից կըել չի կարելի:

3. Ի՞նչպես հակագաղը «յերթային» դրությունից փոխադրել «պատրաստ» գրության:

4. Ի՞նչպես հակագաղը «պատրաստ» գրությունից փոխադրել «մարտական» գրության:

5. Ի՞նչպես պիտի շնչել հագած հակագաղի մեջ:

6. Ի՞նչպես որքել սաղավարտի քրանած ակնցները:

7. Ի՞նչպես հանել սաղավարտը (դիմակը), չորացնել, ծալել և գնե պայուսակի մեջ:

8. Հակագաղի ի՞նչպիսի անսարքինությունների ժամանակ կարելի յետու այն ոգտագործել թունավորված ողում և ի՞նչպիսի ձեռքի ոգնությամբ:

9. Յեթե հակագաղի տուփը սարքին եւ, ապա ամենից հաճախ ի՞նչպիսի յեղանակով կարելի յետուփել հակագաղով, յեթե անսարքին եւ հակագաղի մյուս մասերը:

10. Ի՞նչպես թունավորված ողում փոխել անսարք հակագաղը:

Բացի անհնական անհատական պաշտպանության միջոցներից, ՀՔՊ-ի նպատակով կարելի յէ ոգտվել խթմբակային պատասխանության միջոցներով, այսինքն այնպիսի միջոցներով, վորոնց ողնությամբ թունավոր նյութից միանդամից պաշտպանվում և մարդկանց մի ամբողջ խումբ և վոչ թե յուրաքանչյուր մարդ առանձին-առանձին:

Խմբակային հակաքիմիական պաշտպանության ամենապարզ միջոցը «պատասխանական սենյակն» և համոզիսանում (սենյակապատճառանը), վորի համար սովորաբար հարմարեցվում և բնակելի սենյակը կամ նկուղը: Հարմարեցումն այն է, վոր սենյակը դրսի թունավորված ողի համար դարձվում և անթափանցելի: Դրա համար փակում են ծխատար անցքերը (ծխնելույցները) և բոլոր ճեղքերը (պատուհանների, գուների, հատակի, պատերի, վառարանների), գուներն ու ոգանցքները պինդ (կիսկ) տեղարկվում են, գուներին ու պատուհաններին կախվում են թե՛ համար անթափանցելի վարագույրներ (որինակ՝ մոմլաթ, թարմ յուղած կամ ձյութած խիտ գործվածք, կամ թեկուզ ջրով թրջած վերմակ), պատուհանները ծածկում են թե՛ չանցկացնող վահաններով և այլն:

Համարյա այս ամբողջ աշխատանքը պիտի կատարվի գեռաս խաղաղ ժամանակ այնպես, վոր «ոռդային տագնապ» աղջանակով մի քանի ըրպեսում կարելի լինի սենյակը լրիվ հարմարեցնել թե՛ պաշտպանվելու համար:

Պաշտպանական սենյակում գլխավորապես ոլիտի թագնվեն այն մարդիկ, վորոնք հակագագերով ոգտվել չեն կարող (հիվանդները, ծերերը, փոքր՝ ծծեկը յերեխանները):

Բոլոր դեպքերում պաշտպանական սենյակի համար պիտի ընտրել այնպիսի շենքեր, վորոնք ամենից քիչ պատուհաններ, գուներ, վառարաններ ունեն և ունեն ամուր պատեր, առաստաղ և հատակ:

Փողոցի յելքի և պաշտպանական սենյակի միջև պետք է անպայման լինի միջանկյալ բնակարան, թեկուզ մի փոքրիկ միջանցք կամ նախասենյակ (գավիթ, հաշա) պինդ փակվող զըռներով: Միջանկյալ շենքը (այսպես կոչված «տամբուրը») մեծ չափով նվազեցնում է թե՛ դոների միջով պաշտպանական սենյակ թափանցելը և առանձին մարդկանց թույլ և տալիս մտնել

պաշտպանական սենյակ նույնիսկ դրսի ոգում թե՛ լինլեռ զեւ-

քում:

Պաշտպանական սենյակի ներգործության տեսողությանը կախված եւ սենյակում յեղած յուրաքանչյուր մարդուն համոզող ողի քանակից: Ի նկատի ունենալով, վոր դրսից ող ներս չի գալու, պաշտպանական սենյակով ոգտվող մարդիկ ստիլված են շնչել միայն այն ողը, վոր սենյակի ներսումն և գտնվում:

Պաշտպանական սենյակում թագնված յուրաքանչյուր մարդուն 1 ժամում մոտավորապես 2 խորանարդ մետր ող և պահանջվում: Այդպիսով, 20 քառակուսի մետր հատակ և 3 մետր բարձրություն ունեցող մի դատարկ սենյակ կարող և 3 ժամվածքում պաշտպանակ 10 մարդ:

Խաղաղ ժամանակ կատարվում են պաշտպանական սենյակի սարքավորման հետեյալ աշխատանքները:

Կրախառն կավով լցնում են պատերի և առաստաղի բոլոր ճեղքերն, ու ճաքվածները (հետո սպիտակացվում են կամ յուղաներկով ներկվում), խոշոր ճեղքերը վաղորոք խծծվում են ծայրահեղ դեպքում ճեղքերն ու ճաքվածները փակցվում են մի քանի շերտ հաստ թղթով:

Հատակի և պատի միջև յեղած ճեղքերը լցվում են մածիկով, ձյութով, խծուծով, մամառ կավով, մածիկի վրայից փակցվում և 2—3 շերտ հաստ թղթով:

Հյուսնի սունձով պատած փայտե ձողիկների ողնությամբ լցվում են հատակի ճեղքերը:

Պատուհանների ջարգված և վնասված ապակիները փոխվում են ամբողջական ապակիներով: Նորոգվում են պատուհանների ճաքճքոտած մածիկները: Խծծվում և մածիկով լցվում են պատուհանների շրջանակների, պատուհանների և գուների շրջանակների և գուների բոլոր ճեղքերը: Մածիկը ծածկվում և յուղաներկով կամ փակցվում և մի քանի շերտ հաստ թղթով:

Պատուհանների համար պատրաստվում են զնովի վահանակեղեցիք. վահանները պետք է պինդ հավաքված լինեն, լավ խծուծված և ծածկված յուղաներկով: Ներկը խծծումը կարելի յէ փոխարինել մի քանի շերտ հաստ թղթով փակցներով: Վորպեսով վահանները պատուհանների շրջանակներին ավելի կիպ միանան, պետք և վահանների յեղքերը պատել թաղիքով կամ մահուցով և վրան շինել սեղմիչ փականներ: Նկուղային հարկերի պատուհանները փակելու համար վահանների փոխարեն կարելի յէ պատրաստել ավագով կամ հողով լցված պարկեր:

Պինդ կալմովում են և մի քանի շերտ հաստ թղթով փակցվում ավելորդ դոները, պատուհանները, կրակարանի և այլ անցքերը:

Պատրաստվում են փայտե լիցաններ, կահանակներ, մասունդից և թաղիքից շինած՝ ձյութած միջադիրներ՝ վառարանների անցքերն ու ոգամուտները կալմելու համար:

Պատրաստվում են նյութեր՝ դաներն ու լուսամուտների ողանցքները պինդ փակերու համար (շերտեր՝ մահուգից), թաղիքից կամ կեմից, գործվածքից և խծուծից՝ լուսամուտների թերերը (փեղկերը) պատերու համար; փականներ՝ դռների համար, մեխեր, թուղթ, փայտե ձողաններ և այլն):

Ռազմական գործողություններն սկսվելու հետ կատարվում են վերջին նախապատրաստական աշխատանքները:

Լուսամուտի ապակինները փակցվում են թղթի խաչաձեռող շերտերով (զա մի փոքր մեծացնում ե ապակինների գիմազրությունը ողի հարգածին և ցնցումներին մոտակայքում ոռոմքերի պայթյունների ժամանակ, ինչպես նաև պահպանում ե ճաքած ապակինները թափկերուց):

Պինդ մեխվում են բոլոր դռները, բացի մեկից:

Դռների փեղկերի կողերի վրա, կամ գոան շրջանակի վրա, ողանցքների կողերի վրա խփվում են պատրաստված կեմերը, միջադիրները և այլն, վորով ապահովվում են փեղկերի պինդ տեղարկումը շրջանակներին:

Պատրաստվում են արագորեն ամրացնելու համար դռների աւղմիչ փականները:

Պատրաստվում են արագորեն կախելու համար դռների և լուսամուտների վարագույրները, վահանները և այլն: Պատրաստ պահվում են ուղարջի շրեց և թուղթ:

Այսպիսի նախապատրաստության դեպքում «ողային տագնապ» աղդանշանով սենյակը կատարելապես պատրաստ գրության ըերելու համար մնում ե ամրացնել դռների փականները՝ կախել դռների և լուսամուտների վարագույրները կամ վահանները, փակել ծխնելուցից դռնակը, կափարիչը և վառարանի ողամուտը: Ծխնելուցի կափարիչի փակելը շատ հեշտ և լցնել թթվելու կողակը (ՅԼԻՈՒ) 4—5 սանտիմետր հաստության մոխրի շերտով: Ծխնելուցի դռնակը փակցվում ե 2—3 շերտ թղթով: Կառարանի ողամուտը կախվում ե նախորոք պատրաստված փայտյա խցանով, թաղիքի կտորով և այլն: Կրակարանի դռնակը՝ փակել պետք չե:

Սահմանվում են պատասխական սենյակով օգտիկու հետեւ վյալ կանոնները:

Պաշտպանական սենյակը զբաղեցնում են «ողային տագնապ» աղդանշանով, իսկ առանձին դեպքերում՝ «քիմիական տագնապ» աղդանշանով (հակառակորդի ցամաքային քիմիական հարձակման ժամանակ): Միաժամանակ չի կարելի թույլ տալ վոր սենյակը լցվեն վորոշված նորմայից ավելի մարդկեկ (այդ բանին հետևում ե հերթապահներ): Սենյակը չընթել վոչ մի իր բացի յերեխանների համար մանդամթերքից, հիվանդների գեղությունից և խմելու ջրից: Փակել պատուհաններն ու վառարանների անցքերը նախապատրաստած հարմարեցումներով: Դուռը փակել միայն «քիմիական տագնապ» աղդանշանով (յեթե զրանից առաջ «ողային տագնապ» աղդանշան տված և յեղել) կամ թև հոտ հայտաբերելու դեպքում: Ձեռք առնել այն բոլոր միջոցները, վորոնք նպաստում են ողը մաքուր պահելուն և խնայողությամբ ծախսելուն՝ չծխել, կերպուինկաններ և պրիմուսներ չվառել: Եթե կտրուհապորդագիծ չինելու, եկմիտրական լուսավորություններն անջատելու կամ փչանալու դեպքում պետք ե գործածել ձեռքի լապտիքներ կամ մոմ, ծայրահեղ դեպքում՝ փոքրիկ նավթի լամպեր (ամեն մի սենյակին մեկը): Հստ հնարավորության խուսափել ամեն մի ավելորդ շարժումից, վորովհետև դա արագացնում ե ողի ծախսումը և նրա փչացումը:

Նրանից հետո, յերբ պաշտպանական սենյակի դուռը փակված կինի, սենյակ մտնելն ու դուրս գալը, վորպես կանոն, չեթույլատրվում մինչեւ իմաց կտան, թե յիմիական վտանգն անցել ե: Բացառություն կարող ե արվիլ նոր մարդկանց ներս մըտնելու համար միայն այն դեպքում, յեթե մուտք ի առաջ շինված ե հողմարդել, իսկ հողմարդելում գտնվում ե հակագաղ հագնված արտաքին հերթապահները, հազուսան ու ողը թև մաքրելու համար կան միջոցները:

Քիմիական վտանգն անցնելու մասին տեղեկացնելուց հետո սենյակն ողափոխվում ե, զրա համար բացվում են դռներն ու ողանցքները, իսկ յեթե հարկավոր ե, լրացուցիչ ողափոխության համար վառվում են վառարանները:

Առ միայն Թան-ից, այլև ուղակի ժամանակին ավելացիոն ռումբեր կամ երեւանյին ռեկտ ընկերուց պատասխանը պատրաստներ պատրաստը կախվում է նախորոք պատրաստված փայտյա խցանով, թաղիքի կտորով և այլն: Կրակարանի դռնակը՝ փեղկը՝ աղդանապահը պեղանային (ԿՈԴԼՈՅԻ ԻԻՈԳՈ) ակոփ ապա-

ապարանի կառուցումը, վորոն այնտեղ թագնված մարդկանց ապահովում և մինչև 50 կգ քաշ ունեցող ավելառումքերից: Ապաստաբանն իրենից ներկայացնում է 3,5—4 մետր խորությամբ գետնում փորփած պեղան՝ յերկու մուտք-վայրեջքով: Մուտքերը սարքավորվում են վարապուրափոր հողմարգելներով, վորոնք թև համար անթափանցելի յեն: Պեղանում գերաններից շինվում է կարկասածածկոց: Կարկասի վրա դարսվում են 25—30 սանտիմետր հաստության խաչաձև մի շարք փերաններ: Գերանները կիզ կացնում են իրար և միացնում են պնդիչներով և յերկաթալարերով: Գերանների այդ շարքի վրա լցնում են 1 մետր հաստությամբ հողաշերտ, իսկ այդ շերտի վրա դարսվում են ևս յերկու շարք 25—30 սանտիմետրանոց գերաններ: Շարքերը մեկը մյուսի նկատմամբ դասավորվում են խաչաձև, ըստ վորում գերաններն ամբացվում են պնդիչներով և յերկաթալարերով: Գերանների վերին շարքը ծածկվում է 1 մետր հաստությամբ հողի շերտով: Հողից և գերանից շինված ծածկոյթը պաշտպանում է վաչ միայն ապաստարանի պեղակը, այլև մուտքերի հողմարգելները: Գերանները պետք է լինեն վոչ պակաս քան բացփած պեղանից 2—3 մետրով ավելի լայն և իրենց ծայրերով պետք է հենվեն վոչ թե պեղանի կարկասի վրա, այլ գետնի ձեռք չտված դանգվածի վրա:

Դաշտային պայմաններում ավելացիսն ուսումբերի կամ հետաճաշին տրկերի բնկորմերից պաշտպանվելու համար կարելի յեռգութել դաշտային ամենապարզ «ձևաբանեվ» թագստոցներով: Ճեղքն իրենից ներկայացնում է զետնում փորփած նեղ փոս 2—3 մետր խորությամբ, 0,6 մետր հատակի լայնությամբ, իսկ վերևում վոչ ավելի 1 մետրից: Փոսի յերկարության ամեն մի մետրի վրա կարող են թագնվել յերկու մարդ: Փորելիս հողը դուրս են գցում փոսի յերկու կողմի վրա և պնդացնում են թմբի ձեռք:

Այդպիսի ճեղքի հակաքիմիական սարքավորումը կազմում է խիտ գործված կոշտ քաթանե ծածկոյթը, ներծծված մեքենացի յուղի 85% և կտավհատի ձեթի 15% վեց (կամ 65% հրացանի հարզի և 35% կտավհատի յուղի) բաղադրությամբ: Քաթաններն իրար միացվում են փայտերի ողնությամբ, վորոնց վրա փաթաթվում են կից քաթանների ծայրերը: Քաթանների վրա գտնըված յեղքերն ամբացվում են ցցիկներով և ճմապատվում են: Ճեղքը մտնելու համար փոսի ծայրերից մեկում շինվում է աս-

տիճանավոր կամ թեք վայրեջք և մեկ կամ յերկու թեք վարագույներ՝ ձյուլթած կամ յուղածծված գործվածքներից: Ճեղքը և նրա ծածկույթը պետք է, ի հարկե, պատրաստել վոչ թե հակառակորդի հարձակման սկզբում, այլ վաղորոր:

Սուրգիչ հարցեր

- Ի՞նչպես սարքավորել պաշտպանական սենյակը:
- Ի՞նչ կանոնների պիտի հետևել պաշտպանական սենյակում ողը մաքուր պահելու և խնայողաբար ծախսելու համար:
- Ի՞նչպես են պաշտպանվում փուզասային ոռոմքերից և արկերից և բեկորներից դաշտային պայմաններում:
- Ի՞նչպես ուժՏԾԱՆՎԵԼ ԿԱՅՈՒ ԹԱԿԻ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾԵԼՈՒՑ:

Ամբողջ ազգաբնակությանը չի կարելի հատուկ պաշտպանական հակուստ մատակարարել, վորը մաշկը պաշտպանում է կայուն թևի ներգործությունից: Վորպես կանոն, այդպիսի հագուստ կունենա զորքը, ինչպես նաև այն խմբերը, ջոկատներն ու խմբակները, վորոնք չՈՒՊ-ի ծառայություն են կատարում: Մնացած բնակչությունը պետք է պաշտպանվի զանազան թագստոցներում և ապաստարաններում, իսկույն մտնելով նրանց մեջ ողային տագնապի ազգանշանով:


Ամեն մի շենք և նույնիսկ ամենահասարակ ծածկը կապահպանի կայուն թևի կաթիլներից՝ ինքնաթիւներից փոշեցրելու ժամանակի: Ծնչառական որգաններն ու աշքերն այդ թիւն գոլորշիներից և մշուշից պաշտպանելու համար պետք է հագնել հակագագ:

Բայց այնպիսի թևի գոլորշիներն ու մշուշը, ինչպես իպրիսն ե, կարող են ներգործել նաև մաշկի վրա, մանավանդ ամուսնության ժամանակի: Ուսափ հատուկ հագուստով չպաշտպանված և հակաքիմիական ապաստարաններում (ապաշտպանական սենյակում) յերկար ժամանակ պաշտպանվելու հնարավորություն չունեցող աղքաբնակությունը շատ զեղքում առիվիած և հեռանալու վարակված շրջաններից և նրանցից դուրս մինչև վարակված տեղանքն անվտանգ գարճանելու աշխատանքների (գեղազացման) ավարտելը: Այդ զեղքերում պետք է ոգտվել բոլոր մատչելի միջոցներով՝ վարակված հողի և զանազան վարակված առարկաների հետ շփվելուց խուսափելու համար:

Ամենից առաջ պետք է աշխատել խուսափել վարակված տեղամասներից և, ըստ հնարավորության, հողմարեր կողմից: Յեթե գա հնարավոր չե, ապա նրանց վրայով ջրքաշների ող-

Նությամբ պետք ե շինել անցումներ, վորոնց համար կարող են ոգտագործվել ոժանդակ՝ միջոցներ տախտակներ փոել աղյուսներ, շաբել (քարերը), նրանց վրա դնելով տախտակներ (նկ. 29), գերանները, փայտե կոճերը (շաղաները), դարձանի, հասա մոխրի, ավազի շերտ փաել կայուն թն-ի լծակների վրա և այլն:

Կարելի յե նույնպես վարակված տեղամասում շինել ճանապարհ չվարակված ավազից (5—8 սանտիմետր հաստության շերտով), հողից, չոր աղբից, ցեխից, թեփից, պինդ ձյունից: Յեթե այդպիսի ճանանապարհով շատ մարդիկ պետք ե անցնեն, ապա ճանապարհը փչանալու գեպքում պետք ե նույն մեկուսացնող նյութերն ալելացնել և շերտը հաստացնել:



Նկ. 29. Արաքաշ փայտերից և տախտակներից

Վարակված տեղամասով անցկացնելու անհրաժեշտության գեպքում (անցումներով կամ առանց նրանց) յուրաքանչյուր քաղաքացի պետք ե անձնական նախազգուշության հետևյալ միջոցները ձեռք առնի:

Վարակված տեղամասով անցկացնելու անհրաժեշտության գեպքում (անցումներով կամ առանց նրանց) յուրաքանչյուր քաղաքացի պետք ե անձնական նախազգուշության հետևյալ միջոցները ձեռք առնի:

— Հագնի կոշիկներ, կրկնակոշիներ չունենայու դեպքում կոշիկները փաթաթել փալաներով, կտորով կամ կոշիկների տակը կապել փայտե փոքրիկ տախտակներ.

— յեթե ժամանակ կա, հագուստի թերեն ու շալվարի ստորին մասերը կապել յերիզով կամ շպագատով. վիզը պինդ փաթաթել շարֆով կամ յերեսրբիչով. ձեռքի դաստակները պաշտանել խիտ ձեռնոցներով կամ թաթմաններով.

— հագնել հակագազ, խկ յեթե հակազադ չկա, մի քանի անգամ ծալել թաշկինակը (բարձի յերեսը), յերեսրբիչը և այլն), թռչել սեղմել բերնին և քթին և շնչել այդպիսի ինքնաշեն զիմակով, ու անցնել փակված աչքերով հակագազ հագած ընկերոջ ոգնությամբ:

— Վերցնել հետը մի քիչ բամբակի, նազլի՛ կամ բենզին (սրվակով) վարակված տեղամասով անցնելուց հետո մաքուր վայրում մարմնի բաց տեղերը լվանալու համար.

— Եարժվելու ժամանակ խստորեն պահպանել այն հերթականությունն ու ուղղությունը, վոր ցույց են տալիս վարակված ույսից գուրս գալը կազմակերպող անձննք, շարժվել առանց կանգառներու, արագ, բայց վոչ վաղելով, վոչ մի գեպքում իրենից առաջ գնացողներից առաջ չանցնել և գուրս չդալ անցումի սահմաններից, վոր ցույց են տրված արգելային նշաններով. հետեւ, վոր հագուստը վարակված շենքերի պատերին, թփերին, խոտին չդիպաշ. գետնից վոչ մի առարկա չբարձրացներ:

Վարակված տեղամասից գուրս դալով, գեկավարի ցուցմունքով հանել հակագազը և վոտքերը պաշտպանելու միջոցները Դրանից հետո կոշիկ ներանները ինսամքով սրբել գետնին և բամբակի ու նալիթի (բենզինի) ոգնությամբ լվանալ մարմնի բաց տեղերը: Անհրաժեշտության դեպքում յենթարկվել սանիտարական մշակման (ամբողջ մարմնի լվացում):¹ հատուկ լողակայանում:

ՍՅՈՒԳԻ ԽԱՐԺԵՐ

1. Ողային տագնապի աղդանշանով և ողային հարձակումը վերջանալուց հետո ի՞նչ պիտի անել կայուն թն մաշկային ներկությունից պաշտպանվելու համար:

2. Ի՞նչ միջոցների ոգնությամբ կարելի յե անցկացնել շինել կայուն թն գարակված տեղամասերից գուրս գալու համար:

3. Նախադդուշական լինչ միջոցներ և վարվելու լինչ կանոններ պիտի պահպանել վարակված տեղամասով անցնելու:

4. Ի՞նչ պիտի անել վարակված տեղամասից գուրս գալուց հետո:

5. ԱՊԱԳԱԶԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՒ ՅԵՂԱՆԱԿԱՆԵՐԸ

Ապագազացում—գեղազացիս ասելով հասկացվում ե թն վարակված կառուցումները, տեղանքը, ողը, շենքերը, սննդամթերքները, ջուրը, հագուստը և զանազան առարկաներն անվաս գարձնելու համար զործադրվող բոլոր միջոցառումները:

Կայուն թն (իպրիտ և այլն) անվաս գարձնելու և հեռացնելու համար կատարվող ապագազացման աշխատանքների՝ ժամանակ գործադրվում են հետեւյալ հիմնական նյութերը:

Քլորակիրը (ապիտակացնող կիր) չոր կամ շփոթի վիճակում (ջրով բացված) ներկայում վողոցների, բակերի, պատերի և շենքերի, շենքերի ներսի ապագազացման համար հիմնական նյութ

և հանգիստանում: Կայուն թե (իպրիտ և այլն) անվաս են դարձանում նրա մեջ գտնված քլորը:

Կալցիումի հիպոքլորիտն արտաքինով նման է քլորակրին, բայց ավելի շատ և քլոր պարունակում:

Ցեռացրած ջուրը, ջագալորեշին, տակ ողբ գործածվում է հագուստների, տնային իրերի ապագազացման համար:

Զանազան վառելանցուքերը (նավթ, կերոսին, բենզին) գործածվում են տեղանքի փոքրիկ տեղամասեր, կառուցվածքների առանձին մասեր և այլն անվաս դարձնելու համար, վարակված մակերեսի վրա այդ նյութերը վառելու միջոցով: Նրանց պակասությունն այն է, վոր վտանգավոր են հրդեհի տեսակետից:

Կայուն թե լուծիչներն ողտագործվում են վարակված առարկաներից թե գուրս հանելու և հեռացնելու համար: Լուծիչները թե անվաս չեն դարձնում, այլ միայն նրանց լուծում են, ուստի ողտագործած լուծիչները վտանգավոր են և պետք է վոչնչացվեն (նրանք պետք են այրել կամ թաղել հողի մեջ): Լուծիչները գործածվում են գլխավորապես մետաղյա առարկաներն ապագազացման յենթարկելու համար: Իպրիտի լուծիչներն են բենզինը, կերոսինը, գազոլինը, սպիրտը:


Ապագազացման գործիքներ յև ենդակայում ներ

Ցրակորային կցորդ—ապագազացնողը (կրծատ ԱԴՏ (նկ. 30) ծառայում և տեղանքի մեծ տեղամասերի ապագազացման համար: Գյուղատնտեսության մեջ կարող է գործածվել հողի կրացման համար: Գործիքի հիմնական մասը շաղ տալու հարմարանքն և թրթուրավոր տրակտորի սովորական յերեք տոննանոց կցորդի հետեւ պատճի վրա: Այդ հարմարանքը շաղ է տալիս քլորակրի, վոր ստացվում է կցորդի թափքից: Շաղ տվող հարմարանքը կարելի յե ամրացնել նաև բեռնատար ավտոմոբիլի կամ սայլակի թափքին: Սայլակն ամրացվում է սովորական անիվավոր տրակտորին:

Ցեսիի շարժական ապագազացման գործիք (ՎԴՊ-1) (նկ. 31) ծառայում և տեղանքի փոքրիկ հարթ տեղամասերի ապագազացման համար: Այդ գործիքի հիմնական մասն անիվարի վրա գրված մետաղյա ասկառն ե, վորի մեջ լցում և քլորակրիը Սակառի ներսում կա թափալող թմբուկ, վորը սարքի աշխատելու ժամանակ սակառի միջից առնում է քլորակրիը և սարքի ստո-

լորին մասի ցանաձեղքից շաղ և տալիս ապագազացվող մակերեսի վրա:


Ցեսիով և լափափոխվող՝ օպղ սվող ապագազացման գործիք (ՎԴՊ-1) (նկ. 32) գործածվում է մետաղյա առարկաները, գյուղատնտեսական գործիքները, տրակտորները, ավտոմեքենաներն



Նկ. 30. Ցրակորային կցորդ—ապագազացնող ԱԴՏ-1

ու կոռուցվածքների առանձին փոքրիկ ուղղահայց տեղամասերը լուծիչներով ապագազացնելու համար:


Մաղ-պատգարակները գործածվում են տեղանքի փոքրիկ անհարթ տեղամասերը քլորակրով ապագազացնելու համար, ինչպես նաև ապագազացնելու համար այն քաց թողնված տեղերը, վոր մնացել են (ՎԴՊ-1) գործիքից և տրակտորային կցորդի (ԱԴՏ-1) աշխատանքի ժամանակ: Մաղ



Նկ. 31. Մաղ ՎԴՊ-1

պատգարակն իրենից ներկայացնում է հետծալովի բռնակներով և ծակոտկեն մետաղյա հատակով փայտչա արկդ:


Հրագործիք (նկ. 33) ծառայում է վարակված տեղանքի փոքրիկ տեղամասերը վարակված շերտի այրման միջոցով ապագաղացման համար:



Նկ. 32. Զեռքով տեղափոխվող ապագաղացման սարք՝ ԱԴՊ-1 (բուվլ համաժ հ)

Համար ողտագործվում են դույլեր, ներկարարական և ճիլոպի վրձիններ և այլն: Լուծիչներով ապագաղացումը կարելի յէ կատարել այգեգործական և բանջարանոցային զանազան ցողիչներով, ցնցուղներով, վերջապես, պարզապես ամեններով և դույլերով: Տաք հեղուկներ թափելու համար կարելի յէ ողտագործել պարտեզի ցնցուղ, տակառ-ջրիչներ և այլն:

Հագուստները, տնային գործածության իրերը և զանազան



Նկ. 33. Ապագաղացման հրագործիքի սխեման

ապարատները (հեռախոսները, մոտոռները և այլն) տաք ողով և դոլորշով ապագաղացման համար կան հատուկ ապագաղացման

կամ երաներ: Կամերաների համար կարող են հարմարեցվել բազ-նիքների շոգու բաժանմունքները:

Գոլորշով կամ ջրի մեջ յեռացնելու միջոցով բամբակեղեն հյուսվածքների, ինչպես և ոեզինե գործվածքների ապագաղաց-ման համար գործածվում են կարս-ցիր (նկ. 34):

Տեղանիքի յեվ գանագան
կառուցում ների ապագաղացումը

ԹՆ վարակված տեղանքը սովորա-
բար անվաս և դարձվում չոր քլորա-
կլը ոգնությամբ, ցանելով միջին նոր-
մայով—400 գրամ 1 քառակուսի մետ-
րին կամ 300 գրամ կալցիումի հիպո-
քլորիտ: Վորոշ զեղքերում կարելի յէ
պարզապես բահով կտրել—շուռ տալ
վարակված շերտը (5—8 սանտիմետր
խորությամբ):

Թ-փերով (մացառներով) կամ բարձ-
յառով ծածկված ենդանեն ապագաղաց-
վում և հրե յեղանակով կամ քլորա-
կլիք ցանելու, նախորոք հեռացներով բուսականությունը (հնձել,
կտրել, կրակով վոչնչացնել):

Ջունապատ ենդանեն ապագաղացվում և փայտե թիակներով,
քերիչով, սառցակարիչով վարակված շերտը կտրելով: Կտրված
ձյունը տարվում է հատուկ նշանակված տեղեր, վորաեղ նա վա-
րակման աղբյուր ծառայել չի կարող:

Կայուն ԹՆ լցված ռումբերից առաջացած փոսերը լցնում են
նողով (ավազով), խառնած փոքր քանակությամբ քլորակլով
(3—4 կիլոգրամ ամեն մի փոսի համար): Վրայից լցնում են 20—
30 սանտիմետր հաստությամբ չվարակված նողի շերտ, իսկ նրա
վրա՝ սովորական նորմայով քլորակլը, շրջապատղ տեղանքին
համահավասար: Անկայուն թՆ լցած ավելացների առաջացրած
փոսերը լցվում են միայն նողով, ավելի լավ ե՝ խոնավ նողով:

Վարակված ծառերն ու թիերը հրդեհաշեջ խողովակով լվաց-
վում են ջրով և դրանից հետո ծառերի բները 2 մետր բարձրու-
թյամբ ծածկվում են քլորակլով: Ծառերն ու թիերն այդ ձևով
ապագաղացվում են նողն ապագաղացներուց հետո (քլորակլով):



Նկ. 34. Կաթսա, կայուն ԹՆ վարակված առարկաները գո-
րշուով մշակելու համար

Սալածածկ յեվ ասժալթած մայրերը հետեւյալ կերպ են ապա-
դաղացվում. նախ՝ մայթերն առատորեն ջրվում են, հետո նրանց
վրա ցանվում ե քլորակիր, վորից հետո ($1-1\frac{1}{4}$ ժամից հետո)՝
յերկրորդ անգամ ջրվում են և ապագազացնող նյութը արօրվում
են խոզանակներով և ցախավելներով, և հետո այդ բոլորը ջրով
ըլացվում ե:

Զերած փողոցները, քակերն ու ձանապարհներն ապագազաց-
վում են քլորակիր շաղ տալով (մեկ քառակուսի մետրին 500—
600 գրամ): Այստեղ, վորտեղ գործիքներ հնարավոր չի գործա-
ծել ապագազացնող նյութը շաղ և տրվում բաներով ուղղակի-
տակառներից:

Տախտակյա Վրաքաներն ու ձանապարհների փայտե մասերը
ապագազացվում են քլորակիր շփոթով վոչ պակաս, քան յերկու
անգամ, լիանալով շփոթը ջրով քսելուց 30—40 րոպէ հետո: Փայ-
տե կամուրջների վրաքաշը ջրով լվացվում և, ապագազացվում
և քլորակիր շփոթով, չվարակված հող, ավագ ցաներով:

**Ենթերի յերկարե կտուրներն ավելներով և կսթավոր խողա-
նակով սրբվում են խոնավ հողով, թեփով, մոխրով, հետո կեղ-
տաշորով լվացվում են ջրով (ավելի լավ և տաք ջրով): Դրբա-
ռա տախտակներից յեվ կավարեպատ կտուրներն ապագազացվում են:
յերկու անգամ քլորակիր շփոթ քսելով: Ենթերի պատերը (փայ-
տե և աղյուսե) ապագազացվում են քլորակիր շփոթով:**

**Յեթե Ենթերը ներախց են վարակված, ապա նրանց ապագա-
զացվումը կատարվում ե այսպես. նախորոք շենքերից հեռացվում
են տնային գործածության առարկաները. պաստառները, պոկ-
վում են և այրվում, վարակված սվաղը պոկվում և. պատերը,
հատակներն ու պաստաղն ապագազացվում են քլորակիր շփոթ
քսելով (մի քանի անգամ), մինչև վոր թն հոտը բոլորովին վեր-
լանա: Վարակված պաստաղն ավելի հարմար և լվանալ հեղուկ
ապագազացնող նյութերով, շաղ տալով ձեռքի փոշեցիրների ող-
նությամբ: Ենթե մանր մետաղյա մասերը (դաների և լուսա-
մուտների բանակները, փականների լեզվակները, ծինիները և
այլն) և ապակիները սրբվում են քլորակիր շփոթով, լվացվում
են տաք ջրով և չորացվում են:**

Ենթերից գուրս հանված առարկաները տեսակավորվում են՝
վարակված առարկաները բաժանվում են չբաժանվածներից՝
իստ վարակված տնային կահկարամիքը, բարձերը, ինչպես նաև
ապագազացման չենթարկվող փայտյա ամանեղենն այրվում են:

**Մնացած առարկաները դանապան ձեռներով, նայած թե ինչ նյու-
թից են պատրաստված, ապագազացվում են:**

Այն շենքերը, վորոնց մեջ մնացել են թն գոլորշիներ կամ
թունավոր ծուխ, ողափոխվում են մինչև վոր թն հոտն անհե-
տանա:

Մեսաղյա իրենի ապագազացումը

**Ապագազացումից առաջ քսուկը վրայից հանվում ե (լավ
սրբելով):**

**Մեսաղյա կրպիս օհնվածքներն ապագազացվում են այրումով,
կամ քլորակիր շփոթով, հետո ջրով լվացվում ե:**

**Դազգահաները զանազան գյուղանետներին մենանաները, մե-
տաղյա խուռա օհնվածքներն ապագազացվում են հեղուկ լուծիչնե-
րով ՌԴՊ-1-ի միջոցով կամ լուծիչով թրծած և քամած լաթե-
րով սրբելով (կաշվե շարժափոկերը հանվում են և ապագազաց-
վում են $60^{\circ}/_{\circ}$ կաշ վոչ ավելի ջերմաստիճան ունեցող տաք ողով):**

**Մաեր մեսաղյա օհնվածքներն ապագազացվում են ջրի մեջ
յեռացներով (մեկ ժամ) կամ լվանալով մանգանաթթվի կալիումի
լուծույթով և սովորական լուծիչներով:**

**Ապագազացումից հետո առարկաները պետք ե լավ չորաց-
վեն:**

Հագուստի, կուկի տնային գործածուքան առարկաների ապագազացումը

**Հագուստի, կուկի և տնային գործածության առարկաների
ապագազացումը գյուղում կատարվել գլխավորածակիս,
յերկու ձեռով ողափոխությամբ և յեռացմամբ:**

**Ողափոխումը կատարվում ե բաց ողում, ձեղնահարկերում
(չարգախներում), կառւրների վրա, մինչև վոր թն հոտը բոլորո-
վին անհետանա: Կայուն թն գոլորշիներով վարակված առարկա-
ների համար ողափոխման ժամկետն ե 2 ժամ և ավելի. կայուն
թն մշուշով կամ հեղուկ թն վարակվածների համար՝ 7—40 որ:**

**Թն գոլորշիների ներգործության տակ յեղած առարկաները
յեթե նրանց վրա կա թն հոտը, միայն ողափոխման են յեն-
թարկվում:**

**Ենացման են յենթարկվում (բաց ողում և լվացքատներում)
հեղուկ մաշկապալարայի թնով վարակված հագուստը, սպիտա-
կեղենը, ամանեղենը և տնային գործածության այլ առարկաներ,**

Փորոնք յեռացման դիմանում են (յեռացման չեն դիմանում կոշտ բրդե և բամբակե հագուստը, վաշխարի մորթուց կարած հապուսաը, կաշվե կոշիկներ): Յեռացման համար ողտագործում են սովորական կաթսաներ, վորոնց մեջ յեփում են սպիտակեղենը:

Հեղուկ կայուն թն վարակված սեղանները, աթոռները և փայտե մահճականներն ապագաղացվում են քլորակրի շփոթով և հետո լվացվում են տաք ջրով ու ողափոխվում են:

Տես ապագաղացվում յեն պիտի և այրվեն հեղուկ կայուն թն վարակված փայտե ամանեղենը և մանկական խաղալիքները:

Պարենի, ջրի յեվ անասնի կերի ապագաղացումը

Դաղանման (գոլորշանման) վիճակում թն սննդամթերքներ և անասնի կերը քիչ են վարակում: Ապագաղացման համար, սուզրաբար, բավական ե մթերքներն ողտափոխել մինչև թն հոտը վոչնչանալը: Զրով լվանալը, յեփելն ու տապակելը նույնական լիովին անվնաս են դարձնում թն գոլորշիների ազդեցությանը յենթարկված մթերքները:

Կտանգավոր են այն մթերքները, վոր վարակված են մշտաշանման կամ հեղուկ կայուն թն: Այստեղ պետք ե հատուկ մշտակումն (դիմագորապես պետք ե հեռացնել վրայի շերտը), իսկ ուշեղ վարակվելիս շատ գենքերում ստիպված ենք նույնիսկ վարակված մթերքները վոչնչացնել:

Թն վարակված ձափարը, ալյուրը, խոտը, վարսակն անվնաս են դարձնում վերին շերտերը հեռացնելու միջոցով, իսկ մնացած մասը թն հոտ չպետք ե ունենա:

Անկայուն թն վարակված ջուրն ապագաղացվում ե յեռացմաբ: Հեղուկ կայուն թն վարակված ջրի ապագաղացումը կատարվում ե այսպես, թողնում են վոր ջուրը պարզվի. հետո անցկացնում են 20–25 սանտիմետր հաստությամբ գետի ավաղի կամ մանրացրած փայտածխի միջով, դրանից հետո նորից 1–3 ժամ թողնում են, վոր ջուրը նստի (պարզվի): Յեթե ջուրը վարակված ե քիչ քանակությամբ հեղուկ կայուն թն, առա այդպիսի ապագաղացումից հետո այդ ջուրը խմելու համար պիտանի յե անալիլը լաբորատորիայից ստանալուց հետո: Ուժեղ թունավորման գեղքում այդպիսի ջուրը պիտանի յե միայն տնտեսական և տեխնիկական նպատակների համար:

Թն ազդեցության տակ գտնված պարենը, ջուրը և անասնի կերն ողտագործել և այս կամ այն ձեռվ ապագաղացնել, վորպես

կանոն, կարելի յե միայն բժշկական և անասնաբուժական աշխատազների թույլտվությամբ և ցուցումներով: Նույնը վերաբերում է նաև այն շենքերին, վոր վարակված են հեղուկ կայուն թն:

Բոլոր մարդիկ, վորոնք ապագաղացման վորեւ աշխատանք են կատարում, պետք և պաշտպանված լինեն հակածաղերով և մաշկի պաշտպանման այս կամ այն միջոցներով (հատուկ զգեստով, կամ կտավնատի ձեթով ձյութած գողնոցով, ոեղինե հաստ ձեռնոցներով, ոեղինե յերկարավիղ կոշիկներով կամ կրկնակաշիկներով և այլն), նայած ապագաղացման աշխատանքների բնույթին:

Սօւգիչ հարցեր

- Ի՞նչ ե ապագաղացումը:
- Թվեք այն հիմնական նյութերը, վոր գործածվում են կայուն թն վարակված տեղանքն ապագաղացներու համար:
- Ի՞նչ նյութեր են գործածվում հագուստն ու զանազան առարկաներ ապագաղացներու համար:
- Ի՞նչով են վտանգավոր իպրիտի ողտագործված լուծիչները և գրանք թնչով պետք ե անել:
- Ի՞նչ հիմնական գործիքներ և ոժանդակ միջոցներ են ծառայում տեղանքի ապագաղացման համար:
- Ի՞նչպես են ապագաղացվում բուսապուրկ տեղանքը, բուսականնությամբ պատաճ տեղանքը, ձյունե ծածկոցը, պայթած ավիոսաւմբերի, վորոնք կայուն թն են լցված, առաջացրած փուերը:
- Ի՞նչպես են ապագաղացվում սալարկած և անսալարկ ճանապարհները, փայտե կամուրջները, շենքերը (դրսից և ներսից):
- Ի՞նչպես են ապագաղացվում մետաղյա իրերը, գործիքները, մեքենաները:
- Ի՞նչպես են ապագաղացվում հագուստը, կոշիկները և անային գործածության առարկաները:
- Ի՞նչպես են ապագաղացվում պարենը, անասնի կերը:

6. Ի՞նչուս ՍՆԴԱՄԲԵՐՔՆԵՐԸ, ԱՆՍՍԻՆ ԿԵՐԸ, ԶՈՒՐԸ ՅԵՎ ՏՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱԿԱՆԵՐԸ ՊԱՇՏՈԱՆԵԼ ԹԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ

Ինչպես յերեսում ե հենց նոր քննած հարցերից, սննդամթերքի, ջրի և մի քանի առարկաների ապագաղացումը բարդ ե, շատ ժամանակ և պահանջում է, իսկ հաճախ ել զյուղական պայմաններում հնարավոր չե: Ուստի նրանց թն ներգործությունից պաշտպանվելու վրա հատուկ ուշադրություն պիտի դարձնան:

Բնակելի կամ արտադրական շենքերում գտնված սննդամթերքները պաշտպանելու համար հարկավոր ե փակել լուսամուտները, դռները և մյուս անցքերը, մթերքները դնել մեծ արկղների, սնդուկների, պահարանների, կիպ փակվող խուփերով՝ արկղների մեջ:

Պաշտպանվող առարկաներն ու սննդամթերքները կարելի յե դնել ծածկի տակ, ծածկել բրեգնետով, ճիլոպով, պարկերով, մոմլաթով, դարմանե վրաքաշով, թղթով: Բըզենտի, ճիլոպի և պաշտպանվող առարկաների միջև պետք ե դնել մի շերտ խոտ, գարման կամ տաշեղ՝ 5—10 սանտիմետր հաստությամբ: Նույնականությունը կապված է ացարքույսերը, խրձերով գեղ դնելը, հացահատիկները բուրգ անելը, նույնը և անասնակերի վերաբերյալ:

Հեղուկ մթերքները, յուղը, ձարպերը, խմելու ջուրը պետք ե լցնել լավ պաշտպանված տակառների, մետաղյա կամ ապակյա ամանեղնի մեջ, խցաններով ու փակիչներով կիպ փակել:

Սննդամթերքները սայլերով և ավտոմոբիլներով ֆոխտողելու ժամանակ այսպես են անում. թափքի հատակի վրա փուռմ են 3—5 սանտիմետր հաստությամբ խոտի կամ գարմանի շերտ, նետո գարսում են մթերքները սովորական փաթթոցափորումով՝ վերկից և կողքերից նույնպես պաշտպանելով 10 սանտիմետր հաստությամբ խոտի կամ գարմանի շերտով. սայլը (ավտոմոբիլը) ծածկում ե բրեգնետով (ճիլոպով) այնպես, վորպեսզի նրա ծայրերը կախվեն սայլի յեղբերից. գարսված մթերքները բրեգնետի վրայից պարաներով պինդ կապվում են:

Սովորական ջրհորները պաշտպանվում են թն վարակվելուց՝ ջրհորի շուրջը (չորս կողմից) 0,5 մետր լայնությամբ և 0,6 մետր խորությամբ առու փորելով: Առուն լցվում ե պինդ տրորված կավով (0,5 մետր շերտով): Ջրհորը փակվում ե լավ փակվող խուփով և ջրհորի վրա պատրաստվում ե փայտե ծածկ:

Մեծ ջրամբարները (լճակները, գետերը) նրանց մեջ թն ընկնելուց պաշտպանելը հնարավոր չե:

ՍՅԵՎԻՔԻ ԽԱՐԳԵՐ

1. Ի՞նչ միջոցներ են ձեռք առնվում բնակելի կամ արտադրական շենքերում գտնված զանազան առարկաներն ու սննդամթերքները թն պաշտպանելու համար:

2. Նույնը—բաց որում պահպանվողների համար:

3. Ի՞նչպես պաշտպանել թն սերգությունից հեղուկ մթերքները, յուղը, ձարպերը:

4. Ի՞նչպես պաշտպանել թն սայլերով և ավտոմոբիլներով անդամակիրներով սովորական փակվումները:

5. Ի՞նչպես պաշտպանել սովորական ջրհորները նրանց մեջ թն ընկնելուց:

7. ԿԵՆԴԱԽՆԵՐԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ

Մարտկի պաշտպանությունը կայուն ԹՆ ՍԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ

Մարտական պարագայում հակառակորդի կողմից թն գործադրելու դեպքում ամենից շատ վնասվում ե կենդանիների մաշկը և վոտքերը, զիմավորապես կայուն թն անասունների վրա ընկնելու ժամանակ:

Երթունքների, աչքերի, սեռական որգանների, հոգերի ծովագույների շակերեսի շուրջը յեղած մաշկը կարող է յերբեմն վնասվել նաև մաշկապալարային թն-ի մշուշով և գոլորշիանման ներգործության ժամանակ:

Զիու մաշկի վրա հեղուկ իպրիտ ընկնելուց 10—15 րոպե հետո (լուրջիքան ընկնելուց 1—2 րոպե հետո) կենդանին սկսում է անհանգստանալ: Զին չորս կողմն և նայում, պոչը թափ և տալիս, մի վոտից մյուսն և փոխվում, վնասված տեղերն աշխատում ե ատամներով քորել վնասված տեղերով քսվում և ամեն մի առարկայի: Զին յերբեմն շատ ուժեղ գրգռված է լինում, վոտքերով գետնին և խփում, աշխատում և կապը կտրել:


Անհանգստությունը շարունակվում է մի քանի ժամ: Հետո ձին հանգստանում է, կանգնում և (պառկում և) գլուխը կախ, կերից և ջրից հրաժարվում է: Վնասված տեղերում մաշկն սկըսում ե ուռչել, գոյանում են թմբիկներ այտուցային հեղուկով (կենդանիների վրա բշտիկներ չեն գոյանում) (նկ. 35): Որվավերջին այտուցային հեղուկը վնասվորապես կուտակվում է փորի շրջանում: 3—4 որ հետո վնասված տեղերում յերեսում են մանր գեղնավուն կաթիկների ձեռք արտաթորություններ: Հետո կաթիկները չորանում են և գոյանում են չոր կեղեններ, մաշկն առանձին տեղերում մեռնում ե: 15—20-րդ որը մեռած մասերը թափվում են, նրանց տակից դուրս են գալիս վերքեր: Լավանալը յերկար և տեռմ (6—8 շաբաթ և ավելի):

Զիու մաշկի վրա մեծ քանակությամբ իպրիտ կամ լուիզիտ ընկնելու դեպքում ձին կարող է սատկել առաջին յերկու որվա ընթացքում:

Զիու վոտները կարող են մասսվել միայն սմբակներից վեր։
Առանձնապես զգայուն են դեպի իպրիտը ձիու կապի վուկրե
(մատի առաջին վոսկրի) մակերեսը՝ խողանի տակ՝ սմբակի պատ-
կը և փափկանները։

Վոտների մասսվելը ձիուն դարձնում ե անաշխատունակ
4—6 շաբաթով և ավելի։

Եները մասսվում են գլխավորապես վոտների մատներից։
Կենդանիների մաշկը պաշտպանելու համար գործածվում են
հատուկ ծածկոցներ և գուլպաներ, իսկ յեթե դրանք չկան, ապա



Նկ. 35. Մեջքի շրջանում իպրիտով մասսված ձի

տապճակներ (ՊՈՊՈՒ), բրեղենտ, ճիլոպ, պարկեր և այլն իրե-
ռով ծածկվելով։

Աղային սպառնալիքի պայմաններում պետք է, ըստ հնա-
րավորության, կենդանիներին թագցնել ախոռներում, ցախատ-
ներում, ծածկերի և ծառերի տակ։ Վարակված տեղամասերով կեն-
դանիները պետք ե անցկացնել զգուշությամբ, խուսափելով բու-
սականություն ունեցող և փխրուն տեղերից։ Եներին և ուրիշ
մանր կենդանիներին ավելի լավ ե փոխազրել ձեռքերի վրա։

Կենդանու (ձիու, կովի) մաշկի վրա իպրիտ ընկնելու դեպ-
քում պետք ե կենդանուն արագ լվանալ քլորակրի կաթով (9
վետը ջրին խառնում են 1 կիլոգրամ քլորակրի) կամ սապնա-
ջրով (շներին և կատուններին լվանալ միայն սապնաջրով):
Մաշկի և վերջավորորթյունների առանձին տեղամասերը
կարող են մշակել այսպիսի լեղանակներով։ Կերոսինի կամ բեն-
զինի մեջ թրջած և թեթևորեն քամած փալասը կամ բամբակը
դնել մաշկի վրա, կամ թե չե՛ խողանակով կամ պարզապես ու-
ղինե ձեռնոցներով պաշտպանված ձեռներով քսել մաշկին քլո-
րակրի շփոթ (3 լիտր ջրին՝ 1 կիլոգրամ քլորակրի), 2—3 ժա-

մից հետո չորացրած շփոթը մաշկի վրայից հեռացնել խողանա-
կով, դարձմանի կեմով կամ կենդանուն ջրով լվանալով։ Քլորա-
կրի շփոթով կարելի յե մշակել միայն խոշոր կենդանիներին՝
ձիերին, խոշոր յեղջյուրավոր անասուններին։

Կենդանիներին լվանալու ժամանակ անհրաժեշտ ե հետեւյլ
վորակեղի սապնաջրի, կերոսինի լուծույթը, կամ քլորակրի կա-
թը կենդանու աչքերի մեջ չընկնեն։ Մշակման սկզբին ձիու (կո-
վի) գլխին հաղցնել տոպրակ կամ կենդանուն կապել կարճ կա-
պով։ Անհրաժեշտ ե կապել նաև պոչը։

Կենդանիների մաշկը լուիդիտով մասսվելու ժամանակ ան-
հրաժեշտ ե կենդանիներին լվանալ սոլայով և սապնով տաք ջրի
մեջ լուծված։

Ենշառուրյան որգանների պահպանուրյունը

Կենդանիների շնչառության որգաններն ամենաուժեղ չա-
փով մասսվում են այնպիսի թեն, ինչպիսին ֆուգենն ե։ Ֆուգե-
նով մասսվելու նշանները սովորաբար յերեսում են 2—6 ժամից
հետո շնչարելության, հազարու ձևով, կենդանին կանգնում ե
գլուխը կախ, կերից հրաժարվում ե։ Ծանր թունավորված ձիե-
րը 7—8 ժամից հետո ուռնգներից առատորեն փրփուր ե հոսում։
Դա ցույց ե տալիս, վոր թոքերի այտուցը սուր կերպով զարգա-
ցել ե և սովորաբար վկայում ե, վոր թունավորումը սահացու
յե։ Մահը կարող ե վրա հասնել փրփուրը յերեալուց 1—2 ժամ
հետո։ Յեթե առաջին յերկու որվա ընթացքում ձին չստակեց,
ապա կարելի յե հուսալ, վոր նա կառողջանա։ Առողջանալը մի-
ջին հաշվով տևում ե 10—12 որ։

Կենդանին ուրիշ խեղդող թեն — քլորով — վարակվելու ժամա-
նակ, մասսվելու առաջին նշանները համարյա յերեսում են ան-
միջապես հազի ձևով, հետո նկատվում ե կոպերի թարթում և
արցունքի հոսումն։ Վերջին հաշվով քլորով մասսվելը կարող ե
նաև առաջ բերել թոքերի այտուց և մահ։

Գրգորով թեն ձիու շնչառության որգանների վրա շատ թույլ
են ներգործում։ Եները փոշտում են հագում ու փսխում։

Կենդանիների շնչառության որգանները կարող են մասսվել
նաև մաշկային ներգործման թեն մշուշով և գոլորշիներով։ Առանձ-
նապես վտանգավոր ե այդպիսի թեն մշուշը։ Նրանցով վարակվե-
լու դեպքում կենդանին ծանր շնչում ե, գառնում և քնկու, 5—6
ժամ հետո յերեսում ե հազը։ Զիերի սունկներից հոսում ե թա-

քախալից, վատ հոտող արտաթորանք: Շատ հաճախ մի քանի որից հետո կենդանին սատկում ե:

Ենդանիներին պետք ե պաշտպանել նաև ընդհանուր թռւալոր թն, վորոնք ներգործում են շնչառության որդանների միջոցով:

Այդպիսի թն, մեծ քանակով մվասվելունշաններն են՝ սկըզբում մի փոքրիկ անհանգստություն, շնչառությունն արագանում ե, կենդանին գողում ե, հետո ընկնում, սկսվում են ջղաւագությունները և վրա յե հասնում մահը: Վոչ մահացու մվասվածքի դեպքում կարող են լինել բարդություններ, վորպես վոտների կաթված:

Չիու շնչառության որդանները թն պաշտպանելու հիմնական միջոցը հակագաղն ե:



Չիու խոնավ հակագաղը բազմաշերտ թանգիրի տոպրակ ե (նկ. 36): Նա այնպիս և կառուցված, վոր հագցվում և ձիու միայն վերին ծնոտին (ձին շնչում և քթածակերով): Տոպրակը ներծծված և թն անմիաս դարձնող կլանիչ հնդուկով:

Չիուն հակագաղը հագցվում ե 5 նվագով:

Նկ. 36. Չիու խոնավ հակագաղ. վերևում՝ տեսքն առջևից և կողքից, ներքեւմ՝ սեռը տակից և հետեւից

Առաջին նվագ հանել հակագաղը պատյանից, ձախ ձեռքով քանել ճակատի յերիզի մոտից, մոտենալ ձիու գլխին և աջ ձեռքով բռնել սանձը լկամների մոտ:

Յերկրորդ (նկ. 37)՝ աջ ձեռքի չորս մատը (ցուցամատից մինչև ճկույթը) գնել ձիու քթի վրա, խոկ բութ մատը կուխել ձիու բերանն անատամ մասի մոտ, մատով սեղմելով պինդ քիմքը՝ հակագաղի մի մասը քիմքի բարձիկով գնել ձիու բերանը և արագ քաշել ձիու քթի վրա:



Յերրորդ՝ պինդ ձգել ճակատի յերիզը և ամրացնել սանձի ճակատի փոկին:

Չորրորդ՝ ձգելով հակագաղի ծոծրակի յերիզները, արագ դցել ձիու ականջների յետեւը (նկ. 38):

Հինգերորդ՝ պինդ ձգել լըջանային յերիզները և կապել (նկ. 39), ստուգել, թե արդյոք հակագաղը ճիշտ ե հագցրած և, յեթե հարկավոր է, ուղղել յեղած պակասությունները:

Հակագաղը ձիու շնչառության որդանները պաշտպանում ե բոլոր հայտնի թն՝ 1-1½ ժամ-վա ընթացքում, բացի ածխածինոքսիդից: Հակագաղը չի պահում թունավոր ծխերը (գրգռող թն), բայց, ինչպես արդեն մատնանշվեց, այդպիսի թն ձիու շնչառության որդանների վրա շատ թույլ են ազդում:

Հակագաղ չինելու դեպքում ձիու շնչառության կագաղն հաջնեթյան որդանների պաշտպանության ոժանդակ լու յերրորդ միջոց կարող են հանդիսանալ յերկու միմյանց պրիմը մեջ գրված տոպրակներ: Տոպրակների միջև գըրմում ե խոտ, խծուծ կամ մամուխ, թրջած ջրով կամ սպայի զուծութով:

Տոպրակների միջոցով կարելի յե պաշտպանել նաև յեղջու-



Նկ. 38. Չիու հակագաղը
հագցներու չորրորդ
պրիմը



քավոր անասուններին, ինչպես նաև ուղտերին, ջորիներին և ավանակներին:

Շան շնչառության որդանները պաշտպանվում են հատուկ հակագաղի ողնությամբ, վորն ունի գիմակ և թն կլանիչներով ցցված տուփ:

Յեթե կենդանին պաշտպանված չի յեղել և ստոցել և շը-

Հառության որդանների վնասվածք, պետք և նրան նախ և առաջ հեռացնել թունավորված տեղամասից, հետո հանել սարքը (հեծելասարքը, լծասարքը) տանել չոր և տաք շինք (ախոռ ցախատուն), ծածկել ձիածածկով, տալ մաքուր տապաստ և ադամեն որ աշխատանքից: Թունավորման մասին վորքան կարելլ յե շուտ իմաց տալ անասնաբուժին կամ բուժակին:

Վնասված շներին և մյուս մանր կենդանիներին թունավորված տեղանքից հեռացնելու գեղքում գուրս բերել ձեռների վրա:

Աշենրի պատճենությունը

Մարդու աչքերը գրգոռող թՆ (որինակ՝ քլորացնառվենոնը) ձիու աչքերի վրա շատ թույլ են աղդում, և նրանցից ձին իրաշխատունակությունը չի կորցնում: Շան աչքերը դեպի այլ թՆ նույնքան զգայուն են, վորքան և մարդու աչքերը: Բոլոր կենդանիների մոտ ել աչքերի ծանր վնասվածքներ առաջանում են մաշկային ներգործման թՆ:

Այդ թունավոր նյութերից ձիու աչքերի պաշտպանության համար ծառալում են հատուկ ակնոցներ: Յեթե ակնոցներ չկան, աչքերը կարելի յե կապել վորեն շորի կտորով: Շան աչքերը պաշտպանվում են հակագաղի դիմակի մեջ հագցրած ակնոցները:

Կենդանու աչքերը վնասվելու գեղքում պետք և լիանալու գայլի կամ բորաթթվի լուծույթով (1 մաս 100 մաս ջրին), կամ պարզապես մաքուր ջրով:

Մարտության որգարենրի միջոցով կենդանիներին
բունավորում ից պատճենությունը

Կենդանիների մարսողության որդանները թՆ վնասվել կառող են թունավորված կերից և ջրից, ինչպես նաև զանազան առարկաների կամ իրենց սեփական մարմնի վրայից թՆ լիղելու ժամանակ:

Այդ տեսակետից ամենառութեղ, հաճախ մահացու վտանգ ներկայացնում են մաշկային ներգործման թՆ: Այդպիսի վնասվածքի նշաններն են՝ հաճախակի ծամելու շարժումները, կենդանու անհանգստությունը, բերնի լայն բանալը, զլիսի վեր քաշելը, շրթունքների ու բերնի խոռոչը կարմրում են և այտուցվում, կենդանին հրաժարվում ե կերից և ջրից: որվա վերջին յերեւում ե՝ առաջ՝ մածուցիկ թքահոսություն, բերնից՝ գարշելի հոտ:

Այդպիսի վնասվածքները բուժելը շատ դժվար է: Հետևաբար, պետք և ձեռք առնել այնպիսի միջոցներ, վորոնք բացառում են մարսողության որդանների վնասվելու հնարավորությունը: Դրա համար անհրաժեշտ է.

— պաշտպանել կերն ու ջուրը նրանց մեջ թՆ ընկնելուց.

— թՆ ներգործման տակ յեղած կերը տալ միայն վարական մասը հեռացնելուց, ապագազացնելուց և անսանաբուժական մարմինների կողմից հետաղոտավելուց հետո.

— թողնել արածելու և ջրափուերի մոտ միայն պարզելուց հետո, վոր նրանք վարակված չեն:

— կանինի թՆ-ի լիղելը, վորի համար հաղցնել տոպրակ և կարծ կապով կապել կենդանուն:

Աննանիների խմբակային պատճենության միջոցները

Ախոռները, խողանոցները և կենդանիների մյուս մշտական շենքերը պետք ե ըստ հարավորության, թՆ համար գարձնել անթափանցելի: Այդ նպատակով լցվում են կտորի, առաստաղի, հատակի, պատերի, դռների, լուսամուտների մեղքերը՝ կավի, քուքի, խծուծի, փալասների, թուղթ կացնելու ոգնությամբ: Փոխարինվում են դռների և լուսամուտների վնասված ապակիները՝ բեղենատից, ձիածածկովից, նոսր ու կոշտ կտավից պատրաստվում են վարագույներ դռների և պատուհանների համար: Արժեքավոր կենդանիները՝ արտադրողները՝ ապահովվում են թՆ անցկացնելու տեսակետից առավել հուսալի առանձին կացոցներով:

Դրա հետ միասին, քիմջոկատները պետք է իրենց կոլտնտեսությունների, խորհունտեսությունների, ՄՏԿ-ների հակոդային և հակաքիմիական պաշտպանության վերաբերյալ միջոցառությունների նախամարտիկն ու տարածողը հանդիսանան, նրանք պետք ե ամենաակտիվ մասնակցություն ունենան ամբողջ գյուղական բնակչությանը ՀՈՔ-ի համար նախապատրաստելու Պետք և ձգտել հասնելու, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական, խորհունտեսության և ՄՏԿ բանվոր ու ծտուայող, ինչպես նաև

մենատնտես գյուղացին, հանձնի «Պատրաստ ՀՈՔ-ի» առաջին աստիճանի նորմաները և լավ գիտենա, թե ինքն ինչ ե անելու հակառակորդի ողային և քիմիական հարձակման ժամանակակից ժամանակակից։

Քիմջոկատների մյուս, վոչ ավելի պակաս կարևով խնդիրը գյուղատնտեսության քիմիկացիայի վերաբերյալ միջոցառություններին մասնակցելու և, այսինքն՝ մեր դաշտերի բերքատվության բարձրացման համար քիմիան ոգտագործելուն մասնակցելու և. Այդ միջոցառությունների պրոպագանդը պետք և զուգակցել ՀՈՔ-ին աշխատանքի հետ։ «Պատրաստ ՀՈՔ-ի» նորմաների մեջ մտցված են պարարտանյութերի գործադրության, գյուղատնտեսական բույսերի խասատուների և հիվանդությունների դեմ պայքարելու վերաբերյալ համառոտ տեղեկություններ (այդ հարցերը քննվում են մեր գրքույկի հաջորդ յերկու գլուխներում)։ Քիմջոկատներն այդ հարցերի վրա լուրջ ուշադրություն պիտի դարձնեն։

Գյուղատնտեսության խասատուների և բույսերի հիվանդությունների դեմ պայքարելու մեջ մասնակցություն, հողի կրացման և արենտական պարարտանյութեր գործադրելու և տարածելու պրակտիկ աշխատանքների մասնակցություն, «պաշտպանության հեկտարների» մշակելուն ոգնություն, «խրճիթ լաբորատորիաների» քիմիական աշխատանքներին մասնակցություն, կոլտնտեսական կուլտուրական բնակարանի համար պայքար (պարագիտների վոչնչացումը, մաքրություն պահպանելը), քիմիական գիտելիքների տարածում — ահա հասարակական և արտադրական աշխատանքի այն հարցերը, վորոնցով պետք և զբաղվի քիմիական ջոկատը։

Այսպիսով ջոկատի աշխատանքում պաշտպանական աշխատանքը հաջողությամբ զուգակցվում և բուն գյուղատնտեսության արտադրական, տնտեսական և հասարակական շահերի հետ։

Ջոկատներում գտնվելով, կոլտնտեսականները (խորհունտեսությունների և ՄՏԿ-ների բանվորներն ու ծառայողները) հնարավորություններ ստանում իրենց դաշտերի բերքատվության բարձրացմանն ուժանդակելու և դրա հետ միասին ծանոթանալու ռազմական գործի հետ, մասնավորապես հակոդային և հակաքիմիական պաշտպանության գործի հետ։

Ջոկատներում աշխատելով, Պաշավիաքիմի կոլտնտեսային-խորհունտեսային ակտիվը միաժամանակ մեր սոցիալիստական հայրենիքի հակոդային և հակաքիմիական պաշտպանության

ամրացման և բերքատվության բարձրացման վերաբերյալ կարենորդույն տնտեսական ու քաղաքական խնդիրներ և կատարում:

Հարկավոր ե ձգտել, վոր յուրաքանչյուր խորհանտեսությունում, կոլտնտեսությունում, ՄՏԿում քիմիական ջոկատ լինի: Այդ խնդրի կատարումն ամբողջապես կախված է նրանից, թե վորքան լավ, բոլշեկյան յեռանդով ու հաստատակամությամբ հանձն կառնեն այս գործը Պաշտամիաքիմի գյուղական կազմակերպություններն ու կոլտնտեսությունների, խորհանտեսությունների և ՄՏԿների վողջ հասարակայնությունը:

ՀՈՔՊ-ն գյուղում պետք է բարձրացվի ու հասցվի քաղաքի մակարդակին՝ մանավանդ սահմանամերձ շրջաններում: Դրանակապարհը քիմիական ջոկատներն են:

Սեռգիչ հարցեր

1. Ինչո՞ւմ ե գյուղական քիմչոկատների գերը յերկրի պաշտպանության և բարձր բերքի համար մղվող պայքարի մեջ:

2. Վորքնք են քիմչոկատների հիմնական խնդիրները՝ պաշտպանական, արտադրական, կուտառական:

3. Ո՞վ է կազմակերպում քիմչոկատները

ՅՈՒԹԵՐՈՐԴԻ ԳԼՈՒԽ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԱՐԱՏԱՆՅՈՒԹԵՐ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱԿՐՈՒԽՈՒՆԵՐ

1. ԻՆՉՈ՞Ւ ՀՈՐԾ ՊԱՐԱՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՐԻՔ Ե ԶԳՈՒՄ ՑԵՎ Ի՞ՆՉ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ԻՄԱՆԱԼ ՆՐԱՆՑ ՀԱԶՈՂ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ

Պարարտնյութերը բերքատվության բարձրացման հիմնական միջոցներից մեկն են:

Ամեն տարի բերքի հետ միասին հողից վերցվում են ահագին քանակությամբ աղոտ, ֆոսֆոր և կալիում, վորոնք բույսերի մնադառության ու աճման համար անհրաժեշտ են: Այդ պատճառով, վորպեսզի հողը շարունակ լավ բերք տա, անհրաժեշտ ե այդ նյութերը պարարտնյութերի ձևով հողին վերադարձնելը: Բացի այդ, վորոշ հողեր այդ նյութերից հարկավոր քանակությամբ ընդհանրապես չունեն:

Ինչպես հայտնի յէ, հողն տուածանում և քամու և ջրի աղցությամբ քայքայված ապառներից (քարերից), ընդվորում հողառաջացման գործում մասնակցում են բույսերն ու միկրոօրները, վորոնք բուսահող են տալիս: Հետևաբար հողերը չափազանց տարբեր են լինում: Մեր Խորհրդային Միության մեջ հողերի այդ զանազանակերպությունը խիստ մեծ ե:

Մեր յերկրի հյուսիսային մասում, Սառուցյալ ովկիանոսի ափերում, տեղավորված են ճահճուտ տունդրային հողերը, վորոնք բուսականությամբ աղքատ են:

Տունդրայից ավելի հարավ ձգված են պատգալային հողերի հոկայական տացածություններ, վորոնք գլխավորապես անտառներով են ծածկված: Այդ հողերն այդպես կոչվում են այն պատճառով, վոր իրենց սպիտակ-գորշավուն գույնով նմանում են մոխրի: Պողպոլային հողերը ԽՍՀՄ-ի յեվրոպական մասի համա-

բյա կեսն են բռնում: Դրանք շատ են նաև Սիբիրում: Պոդղոլային թթու հողերն աղքատ են սննդարար նյութերով: Առանց պարաբետանյութեր մտցնելու, մանավանդ կիր (կրացում)՝ պոդղոլային հողերից բարձր բերք չի կարելի ստանալ: Ըստ պոդղոլային հողերի մեջ յեղած ավաղի և կավի քանակության, տարբերում են ավաղային, ավաղակավային, կավային և կավակավային հողեր:

Պոդղոլային հողերից հարավ ընկած են, այսպես կոչված, գործանառաջին հողերը, վորոնք իրենցից ներկայացնում են անցողիկ հողեր՝ պոդղոլներից դեպի սևահողերը: Գորշանատառային հողերի վրա պարաբետանյութերը լավ արդյունքներ են տալիս:

Այդ հողերից հարավ գտնվում են սեվահողերը, վորոնք հարուստ են սննդարար նյութերով: Ամենից ավելի լավ են հզոր սեահողերը, վորոնք բուսահողով հարուստ են, և ընկած են սևահողային գոտու միջին մասում:

ԽՄՀՄ-ի յեվրոպական մասի հարավ արևելքում և Կաղախստանում գերակշռում են շագանակագույն և դարչնագույն հողերը: Նրանք շատ սննդարար նյութեր են պարունակում, բայց նրանցից բերք ստանալը կախված է թափվող մթնոլորտային տեղումների (անձրևների) քանակից:

Միշին Ասիայի և Անդրկովկասի անապատային տափառաններում ընկած են այն հողերը, վորոնք կոչվում են գորշանդեր: Նրանք արհեստական վոստգման կարիք ունեն և պարաբերութեր կիրառելիս բարձր բերք են տալիս:

Հողերը միատեսակ չեն վերաբերվում դեպի պարաբետանյութերը: Պարաբետանյութերն ամենից ավելի մեծ բերքի բարձրացում տալիս են պոդղոլային հողերի վրա: Ծայր հարավում, ինչպես նաև գորշահողերի վրա պարաբետանյութեր կիրառելը նպաստում է բերքատվության զգալի բարձրացմանը: Մեահողերի վրա պարաբետանյութերն ավելի թույլ են ազդում:

Բոլոր հողերն ամենից առաջ կարիք ունեն ազդուային պարաբետացման, յերկրորդ հերթին՝ ֆուֆորային և, ապա՝ կալիումական: Կալիումական պարաբետանյութերն առանձնապես լավ են ազդում պոդղոլային (ավաղային և ավաղակավային), ճահճային և մարգագետնային հողերի վրա:

Դրանից արգեն յերեսում ե, վոր պարաբետանյութերի հաջող կիրառումը պահանջում է մի շարք պայմանների կատարում: Առաջին հերթին պետք է ճիշտ լինի պարաբետանյութերի ընտրությունը՝ նայած այն բանին, թե ինչ բույսերի տակ և ինչ

հողի մեջ են մտցվում: Հետո անհրաժեշտ է վորոշ ժամկետներ պահպանել և հողի մեջ պարաբետանյութերը մտցնելու ճիշտ ճեղք կիրակել, պարաբետանյութերի քանակության հաշվումը ճիշտ կատարել և այլն:

2. Ի՞նչորիս ՊԱՐԱԲԵՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԵՆ ԼԻՆՈՒՄ

Պարաբետանյութերը յերկու հիմնական խմբի յեն բաժանվում: Առաջին խմբին են պատկանում գոմաղբը, տորֆը, կոմպոստը¹⁾, կանաչ պարաբետանյութը: Բոլոր այդ պարաբետանյութերը բուսական ծագում ունեն: Յերկրորդ խումբն արհեստական (հանքային) պարաբետանյութերն են: Նրանք պատրաստվում են հատուկ քիմիական գործարաններում:

Հիմնական սննդարար նյութեր պարունակելու տեսակետից արհեստական պարաբետանյութերը բաժանվում են աղոտայինների, ֆոսֆորայինների և կալիումայինների: Բացի դրանից, կա «անուղղակի» պարաբետանյութերի խումբ, վորոնցից են՝ կիրը, գիպսը և այլն:

Յեթե պարաբետանյութը պարունակում է բոլոր հիմնական նյութերը, վորոնք հարկավոր են բույսերի սննդառության համար, այսինքն՝ աղոտը, ֆոսֆորը և կալիումը, ապա այդպիսի պարաբետանյութը կոչվում է լրիվ: Գոմաղբը լինի պարաբետանյութերից և.

3. ԱՐԵՍՏԱԿԱՆ ՊԱՐԱԲԵՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՃԱՆԱԳԵԼԸ

Արհեստական պարաբետանյութերը կարելի յե ճանաչել արտաքին տեսքից, հողից, համեց (գգուշ): Հաճախ դա բավական չի լինում, վորովհետև շատ պարաբետանյութեր չափազանց նման են իրար: Այդ պատճառով պետք է փորձել, թե ինչ ե լինում պարաբետանյութը, յեթե նրա վրա ջուր լցնենք, յեթե պարաբետանյութը լցնենք շիկացած ածխի վրա և այլն: Մենք կնը-

1) Կոմպոստը հավաքական պարաբետանյութ է, կազմված՝ տորֆից, հողմուսային (բուսահողային) հողից և անտեսության զանազան թափթփուկներից (մոխի, փչացած կերեր, կարտոֆիլից ցողուններ, տերելներ, մոլախոտեր և այլն): Դրանք քայլայման են յենթարկվում կույսի մեջ, վորե վրա ժամանակառությամանը կեղաղածուր, սապնաջուր, գոմաղբայութ են լցնում: Յերբ կոմպոստը միակերպ փափուկ զանգված է զանում, նրան կարելի յե գործադրել բանջարանոցների և այդիների պարաբետանյութը համար:

կարագրենք մի քանի պարզ փորձեր, վորոնցով ճանաչվում են ներկայում ամենից ավելի գործածվող պարարտանյութերը:

Առաջին փորձ—սուպերֆուֆատի վրա (սուպեր): Սուպեր-ֆուֆատը ԽՍՀՄ-ում ամենից ավելի տարածված փուֆորային պարարտանյութն է:

Արտաքինից սուպերֆուֆատը քիչ ե տարբերվում մյուս ֆուֆորական պարարտանյութերից: Նա իրենից ներկայացնում ե մուլտ կամ բաց-գորշագուն, իսկ յերեմն ել համարյա սպիտակ գույնի (նայած հումուրիթին) կտորիկներ (հատիկներ): Ունի թթու, կծու համ և հատուկ հոտ: Յեթե մի պտղուց սուպերֆուֆատ մատների միջև սեղմենք, այն ժամանակ նա կկպչի և կխոնավանա: Ավելի ստույգ ճանաչվում ե հետեւյալ հատուկ փորձի միջոցով:

Թեյի բաժակի մեջ լցնել մի գդալ պարարտանյութ, վրան ավելացնել մի գդալ ջուր, լավ խառնել և վրան լցնել կես գդալ մանրացրած կավիճ: Եթե լուծույրն ակսի խիստ քօւալ յեվ փրփրել, ապա այդ նաև ակտակում ե, վոր վերցված պարարտանյուրը սուպերֆուֆատ եւ:

Եթերորդ փորձ—այն պարարտանյութերի վրա, վորոնք սպիտակ կամ գորշագուն գույն չունեն և սուպերֆուֆատից տարբերվում են նաև արտաքին ուրիշ հատկանիշներով:

Յեթե պարարտանյութը մբնագույն ե, ապա դա կարող ե լինել Թումաս Շակի (Փոսֆորով հարուստ ճանքերից պողպատ արտադրելիս ստացվող կողմանակի արդյունքը)—ֆուֆորային պարարտանյութերից մեկը: Մուգ, ծանր, նուրբ, բոլորովին չոր փոշի յե, ջրում չի լուծվում: Յեթե բաժակի մեջ կես գդալ պարարտանյութ գցենք և վրան ավելացնենք մի գդալ քայլախ, այն ժամանակ պետք ե առաջանա իչչացած ձվի հոտ:

Կալցիում ցիանին պարարտանյութ ե: համարյա սև, նուրբ, թեթև փոշի: Շատ փիլուն ե. շաշափելիս փափուկ և փոշի առաջացնող ե: Յեթե թրջվում ե, այն ժամանակ ամոնիակի (անուշաղի սպիրտի) խիստ հոտ և արձակում: Զրում չի լուծվում: Համը փուրել չի կարելի:

Ֆուֆորային ալյուր—ֆուֆորային պարարտանյութ ե: Մուգ կամ կեղտաշ-գորշագույն (զանազան յերանգների), շոշափելիս չոր փոշի յե: Զրում չի լուծվում:

Յեթե պարարտանյութը վարդագույն կամ կարմրա-դարչնագույն յերանգ ունի, ապա դա կարող ե լինել սիլինիտ (կալիումական պարարտանյութ) կամ կալիումական աղ: Արտաքին տեսքով նման են սովորական կերակրի աղին: Սիլինիտը կարող ե նաև

գորշ գույնի լինել: Հատուկ փորձեր: 1) կես գդալ պարարտանյութը լցնել մի բաժակ ջրի մեջ—պարարտանյութը ջրում պիտի լուծվի, համը աղի յե. 2) յեթե մի պտղուց գցենք շիկացած ածխի վրա՝ կճթճթա, բայց չի հալի:

Եթերորդ փորձ—գորշ կամ սպիտակ գույնի պարարտանյութերի վրա՝ ըստ նրանց ջրում լուծելիության:

Բաժակի մեջ լցնել մի կերակրի գդալ պարարտանյութ և ձողիկով խառնել 5 րոպե: Հետո թողնել, վոր նստի և տեսնել թե պարարտանյութի վհր մասը լուծվեց ջրում: Համեմատել հետեւյալ աղյուսակի հետ:

№ և բառ կարգի	Պարարտանյութի անունը	Պարարտանյութի արտաքին տեսքը	Զրում լու- ծվությունը
1	Փոսֆորային ալյուր (Փոսֆորային պարարտանյութ)	Կեղտա-գորշագույն դաշտական յերանգների	Չի լուծվում
2	Ամմոնիում սուլֆատ (ազոտային պարարտանյութ)	Մանր, սպիտակ, չոր փոշի	Ամբողջովին լուծվում է
3	Սելիտրա (ամինիակային) և լիյնասելիտրա (ազոտային պարարտանյութ)	Նման ե կերակրի աղի: Շոշափելիս խոնավ ե:	Նույնպես
4	Պրեցիպիտատ (Փոսֆորային պարարտանյութ)	Մանր փոշի յե, բաց գորշ կամ սպիտակ գույնի, կեղտաստ, յերեմն գեղին յերանգով	Չի լուծվում

Զսիալիվելու համար յերարդ փորձից հետո պետք ե լրացնել կերպով կատարել չորրորդ կամ հինգերորդ փորձը:

Վերրորդ փորձ—լրացնել յերարդին:

Վերցնել մի կտոր փայտի ածուխ, լամպի կամ պրիմուսի վրա նրան շիկացնել մինչեւ կարմրելը (կարելի յե ուղղակի վառարանից շիկացած ածուխ հանել): Շիկացած ածխի վրա լցնել մի փոքր պտղուց պարարտանյութ և դիտել թե ինչ ե կատարվում արդյոք պարարտանյութը բռնկվում ե, այրվում կամ միայն հալվում ե, արդյոք չի ծխում:

Առաջին գեպ—յեթե պարարտանյութը բռնկվում ե, ապա դա ամոնիակային սելիտրա կամ լիյնասելիտրա յե:

Յերկրորդ գեպ—պարարտանյութը չի բռնկվում, այլ սպիտակ ծուխ ե տալիս—դա ամոնիում սուլֆատ ե:

Յերբուգ գեղարտանյութը միայն հալվում ե
կամ բոլորովին չի փոխվում—պետք և ուրիշ փորձեր կատարել:
Հենցերորդ փորձ—լրացուցիչ յերրորդին:

Մի գդալ թարմ մոխիր խառնել կես գդալ պարարտանյութի հետ, լցնել բաժակի մեջ և վրան ավելացնել մի գդալ յեռացող ջուր: Խառնել ձողիկով և հոտ քաշել: Յեթե այդ ժամանակ ամոնիակի (անուշաղի սպիրտի) հոտ և արձակում, ապա պարարտանյութն ամոնիում սուլֆատը կամ լիյնասելիթը ե: Վորոշելու համար, թէ այդ յերկու պարարտանյութերից վորի հետ գործ ունենք, պետք և հիշել յերրորդ և չորրորդ փորձերի արդյունքները:

Յեթե պարարտանյութն ամբողջապես լուծվել եր ջրում, խոկշիկացած ածխի վրա բոնկվում եր, ապա դա ամոնիակային կամ լիյնասելիթը ե:

Յեթե պարարտանյութն ամբողջապես կամ համարյա ամբողջապես լուծվել ե ջրում, իսկ շիկացած ածխի վրա փորձելու չի բռնկվում և սպիտակ ծուխ և տալիս, մենք գործ ունենք ամոնիում սուլֆատի հետ:

Անցերորդ փորձ—ամոնիակային սելիտրան լիյնասելիտրայից տարբերելու համար ե: Չեռք բերել գեղատնից, ազրոկայանից կամ խրճիթ-լարորատորիայից բարիում քլորիդի 5 տոկոսանոց լուծույթ և աղաթթվի 10 տոկոսանոց լուծույթ:

Մի բաժակ ջրի մեջ լցնել պարարտանյութի մի պտղուց: Խառնել: Թողնել վոր նստի: Նստվածքը քամել մաքուր շորի միշտով մի ուրիշ բաժակի մեջ և քամած պարզ հեղուկով լցնել բաժակի $\frac{1}{8}$ -ը: Պարզ հեղուկի վրա ավելացնել մի քիչ աղաթթվի և բարիում քլորիդի լուծույթ: Յեթե իսկույն ևել մեծ սպիտակ պղտորություն առաջանա, ապա դա ցույց ե տալիս, վոր պարարտանյութը լիյնասելիտրա յի (նյույնպիսի պղտորություն տալիս և սուլֆիդի փոսֆատը): Ամոնիակային սելիտրան նստվածքի տալիս (նույնը և ամոնիում սուլֆատը), վորը և նրան տարբերում ե այդ պարարտանյութերից:


Երրորդ փորձ—պրեցիալիտատի վրա: Չեռք բերել գեղատնից խրճիթ-լարորատորիայից կամ ազրոկայանից գդոխաքարի 10 տոկոսանոց լուծույթ: Բաժակի մեջ դնել $\frac{1}{2}$ թեյի գդալ պարարտանյութ, վրան լցնել գդոխաքարի 10 տոկոսանոց լուծույթ: Յեթե պարարտանյութը պրեցիալիտատ ե, ապա նմուշի վերին շերտն անմիջապես դունավորվում ե վառ-դեղին գույնով:

4. ՀՈՂԻ ՄԵԶ ԱՐԵՍԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ ՄՏՑՆԵԼՈՒ
ՊԱՅՄԱՆԱԿԱՐԱԿԱՆ ՈՒ ԶԵՎԵՐԸ

Պարարտանյութերը հարկավոր ե գործադրել վոչ թե գեպ-քից-դեպք, այլ մշտապես: Պարարտանյութը մտցվում ե այն հաշվով, վոր գլխավոր կուլտուրան ապահովված լինի սննդի բոլոր անհրաժեշտ տեսակներով: Այս հարցում պետք ե զեկավարվել գյուղատուեսների ցուցումներով:

Անհրաժեշտ ե հողի խնամաջան մշակում և համառ պայքար մոլախոտերի դեմ: Այլապես պարարտանյութերն ոգուած չեն բերվի և, ընդհակառակը, միայն կուժեղայցնեն մոլախոտերի աճը:

Զրում հեշտ լուծվող պարարտանյութերը մտցվում են անմիջապես ցանքից առաջ կամ ցանքի ժամանակ, դժվարալուծ-



Նկ. 53. Կոմբինացված շարքացան: Միաժամանակ ցանում
և թե սերմերը և թե պարարտանութերը

ները մտցվում են նախորոք: Պարարտանյութերը դաշտի վրա պետք և հավասարաշափ բաշխվեն: Չեռքով շաղացան անելով այդ բանին հասնելը գդվար ե: Խոշոր անտեսություններում պարարտանյութերը մացնելու համար ծառայում են պարարտանյութերի շաղացան և շարքացան ցանիչները: Պարարտանյութերը շարքերով մտցնելու համար ծառայում են նաև կոմբինացված ցանիչները (նկ. 53): Նրանք միաժամանակ ցանում են թե սերմերը, թե պարարտանյութերը:

Պարարտանյութերը շարքացանով մտցնելու դեպքում անհրաժեշտ ե ծածկել փոցխով, բազմախորի գութանով կամ մի վուճեկ կուլտիվատորով:

Ազուային պարագաներին

1. Ամսնիում սուլքատ—հացահատիկների տակ հեկտարի վրա գործադրում են մինչև 150 կիլոգրամ (կամ 30 կիլոգրամ մաքուլ աղոտ, փորովհետև ամոնիում սուլֆատի մեջ ըստ կշռի 20—21% աղոտ՝ կա), կարտոֆիլի տակ՝ հեկտարի վրա՝ 225-ից մինչև 300 կիլոգրամ, վշի տակ՝ 225 կիլոգրամ, կամ մեջի տակ՝ 450 կիլոգրամ և ավելի, բամբակենու տակ՝ հեկտարի վրա՝ 300-ից մինչև 450 կիլոգրամ:

2. Նատրիումական սելիտա (պարունակում է 15—16% աղոտ), կրային կամ կալցիումական սելիտա 13—15½% աղոտ), ամսնիումակային սելիտա կամ ամսնիում նիտրա (33—35% աղոտ), կալցիում ցիանամիր (18—20% աղոտ), լիյան-սելիտա (26% աղոտ)—բոլոր այս պարարտանյութերը մտցվում են մաքուլ սննդարար նյութի (աղոտի) նույն քանակություններով, ինչ պես վոր ամոնիում սուլֆատ մտցնելիս:

3. Միգանյուրը (46% աղոտ)—բոլոր հողերի և բույսերի համար լավ պարարտանյութ ե. բանջարանոցային բույսերը ջրելու համար կիրառվում ե ջրային լուծություն՝ 3 գրամ միգանյութին 10 լիտր ջուր խառնելու հաշվով:

4. Ամսնիում բրոլիդը (25% աղոտ) կերային արմատապլատուղների և հացահատիկային կուլտուրաների պարարտացման համար և գործադրվում: Կարտոֆիլի, ծխախոտի և վշի համար պիտանի չե:

Թուժուային պարագաներին

1. Թուժուային ալյուրը պարունակում է 15—24% փոսփուրաթթու, գործադրվում ե թթու հողերի, այսինքն՝ բոլոր պողազարյակների, ձանձային, տորֆային և շատ մարդագետնային հողերի պարարտացման համար: Փոսփորիտային ալյուրով կարելի յե պարարտացնել նաև գորշանտառային հողերը և գեղի սևահողերն անցողիկները: Սևահողերի վրա թույլ կերպով և ազդում: Աշնանացանների տակ մտցնում են ցելզիալիս կամ կրկնավարելիս, իսկ գարնանացան հացահատիկների, կարտոֆիլի, ձակնդեղի տակ՝ աշնանից ցրտավար կամ խոզանավար կատարելու ժամանակ: Գործածության նորման մեջ հեկտարին 6—9 ցենտներ ե, վորը

համապատասխանում ե 15 տոկոսանոց փոսփորիտում յեղած 90—135 կիլոգրամ փոսփորաթթվին:

2. Սուլպիցիանաթթու սկահողի համար լավագույն փոսփորաթթին պարարտանյութն է, 14—20% փոսփորաթթու յե պարունակում: Կրկնակի սուլպիցիան մինչև 46% փոսփորաթթու յե պարունակում: Հեկտարի վրա գործածելու չափը 45—60 կիլոգրամ փոսփորաթթու յե, վորը 322—429 կիլոգրամ 14 տոկոսանոց սուլպիցիան փոսփատ և կազմում:

3. Թօմասելակը 14—18% փոսփորաթթու յե պարունակում պիտանի յե բոլոր հողերի համար, գործածելու չափը՝ հեկտարին 400 կիլոգրամ ե:

4. Պենցիտիտաթթու պարունակում է 30—38% փոսփորաթթու, կիրառվում ե բոլոր հողերի համար, գործածության նորման հեկտարին 45 կիլոգրամ փոսփորաթթու յե:

5. Վուկրալյուրը պարունակում է 20—30% փոսփորաթթու, կիրառվում ե թթու մահճացած և տորֆային հողերի վրա, ինչպես նաև լավ ողանարկող ավազանողերի վրա. հեկտարի վրա 3—6 ցենտներ քանակությամբ և գործածվում:

Կալիումական պարագաներին

1. Սիլվինիտը պարունակում է մոտավորապես 16—26% կալիումօքսիդ: Գործածության չափն ե—հեկտարի վրա 300 կիլոգրամ սիլվինիտ:

2. 30—40 տոկոսանոց կալիումական աղեր հեկտարի վրա գործածելու չափն ե—112 կիլոգրամ 40 տոկոսանոց կալիումական աղ:

Կալիումական պարարտանյութերը գործադրվում են պողուրային հողերի վրա, տորֆային հողերում, մարգագետիններում (յերեքնուկի, յերեքնուկից հետո ցանվող վշի տակ), արմատապտուղների տակ (կարտոֆիլի, կերի ձակնդեղի), արևածաղկի տակ:

Սևահուը կրկնակի պարարտանյութ ե, 11—12% աղոտ և 45—48% փոսփորաթթու յե պարունակում: Ամոֆոսի մեկ տոննը փոխարինում ե սուլպիցիան փոսփատի 3 տոննին և ամմոնիում սուլֆատի ½ տոննին: Բոլոր բույսերի համար հիանալի պարարտանյութ ե:

Թօւզի հարցեր

Ի՞նչ նշանակություն ունեն պարարտանյութերը գյուղատներության մեջ:

2. Ի՞նչ ախալի հողեր են գերակշռում ձեր կողմանասության (խորհության) դաշտերում:

3. Ի՞նչ են բուսական ծագումի պարարտանյութերը և արհեստական պարարտանյութերը:

4. Ի՞նչ ե լիվ պարարտանյութը:

5. Ի՞նչպես ձանաչել արհեստական պարարտանյութերը՝ սուպերֆուֆատը, թոմաս շալլը, կալցիում ցիանամիդը, ֆոսֆորիտային ալյուրը, սիլիկատը, ամմոնիում սուրֆատը, լեյնասելիտրան, պրեցիզիտատը:

6. Ի՞նչպիսի արհեստական պարարտանյութեր են կիրառվում (կարող են, պիտք ե կիրառվեն) ձեր կողմանասության մեջ (խորհարնակության մեջ):

7. Ի՞նչ յեղանակներով և ի՞նչ պայմաններ կատարելով են մտցընում պարարտանյութերը հողի մեջ:

8. Պարարտանյութեր գործածելու ի՞նչ նորմաներ են ընդունված ձեր կողմանասության մեջ, խորհարնակության մեջ:

ՈՒԹԵՐՈՐԴԻ ԳԼՈՒԽ

ՊԱՅՄԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՎԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՎՆԱՍՏՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՀԵՎԱԿԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

1. Ինքիչ են ԱՌԱՋԱՆՈՒՄ ԲՈՒՅՍԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ԻՆՉՊԻԻՍԻ ՎՆԱՍՏՈՒՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ

Գյուղատնտեսական բույսերի վնասատուների և հիվանդությունների գեմ պայքարելը բերքատվության բարձրացման կարևորագույն միջոցառումն եւ Մրիկից և ժանդից յերբեմն վոչընչանում և հացահատիկների բերքի մինչև 20—30%՝ խոնավարիներին թաց փտախտը վոչնչացնում և մինչև 5 միլիոն տոնն կարտոֆիլ: Բերքին հակայական կորուստներ են պատճառում նաև ամբարային և այգու վնասատուները, դաշտային մկները, գետնասկյունները, մարգաթիթերու, աշնանաթիթեռու, մորեխը և բույսերի զանազան հիվանդությունները: Վնասատուներն ու հիվանդությունները փչացնում են սերմերը, ծիլերը, բույսերը՝ նրանց աճման ժամանակ, հասունացող և հավաքված բերքը:

Գյուղատնտեսական բույսերի ամենից ավելի վտանգավոր հիվանդությունների մեծամասնությունն առաջանում է սնկերից:

Սնկերը նույնպես բույսեր են: Նրանք բազմանում և տարածվում են սպորներ կոչվող սերմերի ողնությամբ: Սունկերն ինքնուրույն սնկել հողից և ողից, ինչպես որինակ՝ հացահատիկները, ծառերը, խոտերը, չեն կարող: Սնկերը հաստատվում են ուրիշ բույսերի վրա և նրանցից ծծում են պատրաստի սննդարրար հյութերը, դրանով ուժապատ անելով և վոչնչացնելով բույսերին:

Բույսերի հիմնական վնասատուներն են՝ միջատները, տըղերը, կրծողները և դաշտային (կամ մերկ) կողինջները:

Գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարելու պրակտիկայում սովորաբար տարբերում են միջատների յերկու խըմբեր՝ կրծողներ և ծծողներ:

Կրծող միջատների բերանը հարմարված և պինդ կերակուր (հատիկներ, արմատներ, տերևներ և այլն) ծամելու համար: Դրանցից են՝ մորեխը (նկ. 54), աշնանաթիթեռի, մարգաթիթեռի, ամբարի ցեցի, վոսկետիկի թրթուրները, բղեղներն ու նրանց թրթուրները (որինակ՝ կուզկարղեղը, ամբարի յերկարակնձիթը), սղոցողների (հացահատիկի, հաղարջենու և այլն) թրթուրները:

Ծծող միջատները բույսերի հյութն են ծծում: Դրանցից են՝ վլիճները, մեղյանիցաները (նկ. 55), փայտողիլները և այլն:



Նկ. 54. Թռչող մորեխ



Նկ. 55. Խնձորենու մեղյանիցա

մարված և ծծելու համար: Ճանձների ստորին շրթունքը (կնճիթը) հարմարված է հեղուկ սննդունդ ներքաշելու համար և այլն:

Տղերը պատկանում են սարգանման կենդանիներին և կյականազես տարբերվում են միջատներից: Նրանք թերը չունեն, նրանց մարմինը կազմված է յերկու իրար միացած մասերից (գլխակուրծք և փորիկ): Տղերի առանձին տեսակների բերնի կաղմությունը տարբեր է: Բամբակենուն, բանջարեղենին և հատապտղի բույսերին վնասող վոստայնի տիպն ունի բերան, վորը հարմարված է հյութեր ծծելու համար: Ալյուրին, հատիկներին և այլն վնասող տղերի բերանը կրծող է: Տղերը խիստ մանր են: Դրանց կարելի յետեսել միայն խոշորացույցի միջոցով:

Կրծողները կաթնասուն կենդանիներ են: Նրանց ատամները շարմարեցված են պինդ կերակուր՝ հատիկներ, ծառեր, ծառի կեղև և աղ բաներ կրծելու համար: Ամենից ավելի վնասաբեր կրծողներն են գետնակոյտաները և մկնակերպ վնասատուները:

Դաշտային կամ մերկ կողինքները (նկ. 56) նման են խփունջներին, բայց խեցի չունեն: Կողինջի բերանը հարմարված է բուսական կերակուրը լավ տրորելու համար:

Նկ. 56. Դաշտային կողինջ Բոլոր բույսերի այս վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարելու համար հատուկ միջոցներ կան և համապատասխան միջոցառություններ են մշակված: Դրանց հաջող կատարումը հնարավոր և միայն հենց գյուղական կոլխոզային բնակչության ակտիվ մասնակցության դեպքում: Յուրաքանչյուր կոլտնտեսական, խորհանտեսության յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր մենատնտես գյուղացի պետք է տիրապետի բույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարելու հիմնական միջոցներին:

2. ԿԱՆԽԻՉ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարելու վերաբերյալ միջոցառությունները բաժանվում են կանխիչների և վոչնչացնողների:

Ամենից ավելի կարեւոր են ազրոտեխնիկական միջոցառությունները, վորոնք խոչնդում են հանդիսանում մնասատուների և հիվանդությունների առաջանալուն ու տարածվելուն: Գլխավորապես նրանք հանդում են հողը հմտորեն և իր ժամանակին մշակելուն և բույսերը ճիշտ կերպով խնամելուն:

Բազմադաշտ ցանեացանառությունը, վորի կիրառման գեպքում հացահատիկների ցանքերը կանոնավոր կերպով հաջորդում են կերախոտերի, տեխնիկական բույսերի, շարքահերկ կուլտուրաների ցանքերին, անբարենպաստ պայմաններ և ստեղծում բազմաթիվ վնասատուների զարգացման համար: Բազմագաշտը վոչնչացնում է մոլախոտերը, վորոնք շատ վնասատուների և հիվանդությունների տարածման համար ոջախ են ծառայում, գյուղատնտեսական բույսերին տալիս և մեծ կայունություն՝ հիվանդությունների դեմ:

Վաղ ցելերն ամենավասարաբ վասատուների՝ աշնանաթիթեռի և կուզկաբգեղի, լարաթթուրների և ուրիշների՝ տարածմանը խոչնոր են հանդիսանում: Զափաղանց կարևոր և ցելերը մոլախութից մաքրելը: Մաքուր ցելերը համարյա միշտ գերծ են աշնանաթիթեռից և մի շարք ուրիշ վասատուներից: Զբաղված ցելերը խիտ խոր են տալիս, վորից վասատուները խուսափում են:

Խոզանավարը յեվ խոզանի այրելը, ինչպիս նաև խոր աշնանավարը վոչնչացնում են բազմաթիվ վասատուների, նվազեցնում են հացահատիկների ժամկի և ուրիշ հիվանդությունների տարածվելը:

Վաղ ցանքը բույսին հնարավորություն և տալիս մինչև վասատուների և հիվանդությունների յերևալն այնքան ամրապնդելու, վոր այդ բույսերի համար վասավածքները նվազ վտանգավոր են դառնում:

Աւելացաների գարնանային փոյխումը լավ միջոց և պայքարելու այն հիվանդության դեմ, վորն աշնանացանների ձյունի բորբոս և կոչվում:

Տեսակավոր սերմեր ցանելը բույսերին դարձնում և կայուն ընդդեմ հիվանդությունների, և վասատուների դեմ կանխիչ կարևոր միջոցներից մեկն ե:

Հողի պարարտացումը բույսերին ավելի ուժեղացնում է: Պարարտացրած հողերի վրա բույսերն ավելի լավ են դիմանում հիվանդություններից և վասատուներից առաջացած վասավածքներին,

Մոլախութիւն դեմ պայմանը շատ վասատուների զրկում և ապաստարանից և կերից, վոչնչացնում և զանազան հիվանդությունների տարածման ոջախները: Մոլախութիւն դեմ պայքարելու հիմական ձեռն են՝ ա) սերմացուի տեսակավորումն ու զտումը, բ) վարել խամերը, խոպանները, ճանապարհների կողքերը, սահմանները, գ) ցանքաշրջանառության մեջ շարքահերկ կուլտուրաներ մտցնելը, դ) մոլախութիւն քաղհանելը, ե) վաղ և մաքուր ցելերը, զ) բոլոր մեծացողուն մոլախութերը հավաքելն ու այրելը:

Գարնանացաների վաղ բերքահավաքը պահպանում և նրանց կուզկաբգեղից, հատիկի թրթուրից, սղոցողներից, խոչընդուն և մինում շվեղական և հետենյան ձանձերի զարգացմանը:

Հնածած հացահատիկն իր ժամանակին դեղ դեմելը յեվ արագ կարսելը դժվարացնում են դաշտային մկների, հետենյան և շվե-

դական ձանձերի տարածմանը Թվարկած բոլոր միջոցառությունները մտնում են սովորական ազբուտեխնիկական աշխատանքների մեջ, վորոնք պարտադիր են յուրաքանչյուր կուլտուրական տնտեսության համար՝ հողը մշակելու և գյուղատնտեսական բույսերին խնամելու ժամանակ:

3. ՎՈՉՆՉԱՑՆՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

Բույսերի վասատուներին վոչնչացնելու ձեռքբ բաժանվում են մեխանիկականների և քիմիականների: Պայքարի մեխանիկական ձեռքբ հանգում են վասատուների վոչնչացմանը՝ պարզ մեխանիկական հարմարեցումներով, վորոնք զիսավորապես ձեռքի աշխատանքի գործադրություն են պահանջում: Դրանցից են հետեցյալ կարևորագույն ձեռքը.

Սառներ են շինուած դաշտային և բանջարանոցային կուլտուրաներն աշնանաթիթեռի, սովկագամմայի, մարգաթիթեռի և ուրիշ մի քանի վասատուների թրթուրներից պաշտպանելու համար: Ասունների մեջ ընկած թրթուրները զիք պատերով չեն կարողանում վերև բարձրանալ և վոչնչանում են (ջնջում կամ թաղում են առուներում):

Եարժական խափանիչ պատերի սարմելը կիրառվում և մորեխաների դեմ պայքարելիք: Պատերը շինուած են տանիք ծածկելու թիթեղներից: Մորեխի (հետիոտն) շարժման ճանապարհին փոսեր են քանդում և նրանց ծայրերին անկյունի ձեռլ գրվում են շարժական պատերը: Մորեխը հասնելով պատերին, շարժվում են նրանց յերկարությամբ և ընկնում և փոսերի մեջ, վորտեղ և վոչնչացվում են տրորելու ձեռլ:

Սոսնձային ողակներ սարմելն այդիներում թրթուրների դեմ: Շառերի ըներին վորոշ բարձրության վրա 10 ~ 12 սանտիմետր լայնությամբ թղթե ժապավեն են փաթաթում, իսկ ժապավենի վրա թրթուրի սոսինձ են քոսում: Թրթուրներն ողակները հաղթահարել չեն կարողանում, խմբերով հավաքվում են նրա տակ և կամ ինքներն են վոչնչանում, կամ վոչնչացվում են հարզածներով:

Թռնիչ գոտիներ սարմելը: Ամառվա կիսին պազատու ծառի վրա գոտու ձեռվ կապում են ծղոտ կամ խծուծ: Վնասատուները հավաքվում են գոտու տակ ձմեռելու կամ հարսնյականալու համար: Աշնանը գոտին հանում և վասատուների հետ միասին այրում են:

Անապահկար միջաներին ձեռքով հավաքելը կատարվում է անոթներում կամ տոպղակներում, վորոնք կապված են լինում շշածե վզիկներին:

Զեօխնելը գլանիչներով, քարշակներով կամ շուռ տված՝ ջախերով հյուսած փոցիներով, գլխավորապես կիրառվում է մարդաթիթեռոի և սովորակամմայի շարժվող թրթուրի մեծ կուտակումները վոչնչացնելու համար՝ ճանապարհների վրա, ամայի տեղերում և այլն:

Բների անցքերի մոտ գրված ծուլակներով, բակարգներով և այլ միջացներով բռնուելը կիրառվում է գետանասկյուռների և մկների գեմ պայցարելու համար:

Գետնասկյուռների բներում տաք կամ սառը ջուր լցնելը կիշառվում է վաղ գարնանը:

Միջաներին վորավար կատարվում է գայլեր-թիթեռնիչների ողնությամբ:

Թրուրներ վորավար կատարվում է յերկաթե տաշտակների և պույլերի մեջ նրանց թափ տալով, ինչպես նաև ձիաքարշ թըրթուրութիչներով և այլն:

Դիմերի յեզ բարդոցների ուուզն առուներ բանդելը կիրառվում և գաշտային մկներից պաշտպանելու համար:

Վնասատուների դեմ մղվող պայցարում մարդու ողնականներն են հանդիսանում մի քանի կենդանիներ, թոշուններ և միշտաներ:

Սպիտակ տափաստանային ժանտաքիսը վոչնչացնում է մկներին, գերմանամկներին, գեանասկյուռներին: Մի զույգ ժանտաքիսը (արուն և եղբ) և նրանց 7-8 հատ սեղունդները մի տարրում 800-ից ավելի գետանասկյուռներ են վոչնչացնում: Աքիսն ու աղվեսը վոչնչացնում են կրծողներին: Բուն, բվեճը, բվիճակը, մորաճուռակը, մկնաբազեն, ցինը նույնապես վոչնչացնում են կըրծողներին: Վողնիները, չղջիկները, սրճակները, մողեսները, գորտերը շատ մնասատուների լեն վոչնչացնում: Վարդագույն սարյակները հաջողությամբ վոչնչացնում են մողեսին: Սերմագռամները, կկուները, պիրուները, ծիծեռնակները, ջրածիծառները, փայտփորիկները, յերաշտահավերը նույնպես վոչնչացնում են ըստմաթիվ մնասակար միջատների:

Պայքարի միմիական միջաները հիմնված են մնասատուներին սպանող զանազան թույների կիրառման վրա:

Այդ միջոցներն եժան են, ներգործում են արագությամբ և ներկայումս շատ լայն չափով են կիրառվում:

Վնասատուների դեմ պայցարելու համար թույների կիրառման ամենից ավելի տարածված միջոցների թվին են պատկանում:

1. առանձին ապարատների ոգնությամբ հատուկ լուծույթներ սրսկելը.

2. թունավոր փոշիներով փոշոտելը.

3. թունավորված զրավիչ նյութերի միջոցը (թեփերի, հացահատիկների, հացի և այլ նյութերի հետ թունավոր փոշիներ խառնելը կամ նրանց տողորելը թունավոր լուծույթներով).

4. գաղանման թույներով ծխահարելը (կիրառվում է մնասատուների դեմ փակ շենքերի մեջ, պահեստներում, ամբարներում և այն մնասատուների դեմ, վորոնք ապրում են թույների վրա և սնվում են նրանցով (մարդաթիթեռու, մորելի և այլն):

Ներքին ազդեցուրյան բույները ներգործում են կերակրի հետ միջատի կամ կենդանու ստամոքսն ընկնելով: Նրանք կիրառվում են կրծող բերան ունեցող մնասատուների դեմ, վորոնք ապրում են թույների վրա և սնվում են նրանցով (մարդաթիթեռու, մորելի և այլն):

Ներքին ազդեցուրյան թույներից են՝ փարիզյան կանաչը (պարունակում է արսեն, պղինձ և քացախաթթու), նատրիում և կալցիում արսենիտը, կալիում արսենատը, սպիտակ արսենը, նատրիում ֆտորիդը:

Արտաքին ազդեցուրյան բույները գցում են հենց մնասատուների վրա: Նրանց գործածությունը հիմնված է նրա վրա, վոր միջատների շնչառական սիստեմը կազմված է բազմաթիվ ճյուղավորված խողովակներից, վորոնք անցնում են որգանիզմի բուլոր հյուսվածքների միջով և գուրս են գալիս միջատի մարմնի մակերեսը, վերջանալով անցքերով, վոր շնչածակեր են կոչվում. զրա շնորհիվ, մնասակարի վրա ընկած թույնը փակում է շնչածակը կամ թափանցելով միջատի ներս՝ թունավորում են նրան: Արտաքին ազդեցուրյան թույները գործ են ածվում զլիսավորապես ծակող – ծծող բերան ունեցող մնասատուների դեմ (լվիճներ, փայտառջիխներ, տղեր):

Արտաքին ազգեցության թույներից են՝ ռմառը (ավելի լավ և կանաչ ռմառը), նավթառմառային հմուլսիան, ծխախոտի թրմվածքը, յերկաթարջասղը, ծծմբակրային խաշուկը և այլն:

Ծխահարման ժամանակ կիրառվող գաղանման թույները միջատի որդանիզմի մեջ ընկնում են ողի հետ միասին նրա շրնչառական սիստեմի միջով։ Ծխահարիչներից են՝ ծծմբական անհիգրիդը, ծծմբածխածինը, քրորպիկինը, ցիանպլավը։

4. ԹՈՒՅՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿԱՆ ԵՐՉ

Սնկերի գեմ պայքարում են հետեալ նյութերով. բույսերի վրա սրսկում կամ փոշոտում կատարելով՝ պղնձարջասպով («կապույտ քար»), բորդոյան հեղուկով (պարունակում ե պղընձարջասպ և կիր), բուրդունդյան հեղուկով (պարունակում ե պղընձարջասպ և սոլտա), ծծմբածաղկով, յերկաթարջասպով և այլն։

Բացի սրանից, կիրառվում ե սերմիրի ախտահանում ֆորմալինի և սուպերֆուֆատի լուծույթներով, քլորակրի և ջրի խառնուրդով, ԱԲ պրեպարատով (պղնձարջասպ և կավիճ), ՊԴ պրեպարատով (կալցիում արսենիտից, տալկից և կառլինից), պղընձի կարբոնատով, տալկ-արսինով (արսեն և պարունակում) փարիզյան կանաչով։

5. ԹՈՒՅՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՆԱԽԱԶԳՈՒՅԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բույսերի հիվանդությունների և զնանատունների գեմ պայքարելու համար կիրառվող թույների մեծամանությունը վտանգավոր է մարդկանց, թոշունների և ընտանի կենդանիների համար։ Այդ պատճառով թույներով աշխատելիս, նրանց պահելու և պոխտելու ժամանակ պետք է նախազգուշական միջոցներ ուղանապահնել։

ԹՈՒՅՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱԲԻ ԿԱՏԱՐԵԼԻՄ

Բոլոր աշխատողները պետք է ծանոթ լինեն թույների համարավունների և նրանցով թունավորվելու հետևանքների հետ։ Հետեւ, վոր թույնը չընկնի աչքերի, քթի մեջ, շրթունքների, քրանքից խոնավացած մաշկամասերի վրա։ Զծիել և չուտել. վորքան կարելի յե հաճախակի լվալ ձեռքերը։

Փայտե ամանը, վորի մեջ պատրաստում են լուծույթներն ու գրավչանյութերը, ուրիշ նպատակների համար չգործածել։

Յերկաթե և ցինկապատ աման գործածելուց խուսափել (ամանը փշանում և լուծույթները փշացնում ե)։

Թույներով լցված գույլերն ու տակառներն առանց հսկողության չպետք ե թողնել։

Թունավորված տեղամասերի վրա 15 որվա ընթացքում անասուններ չպետք ե արածեցնել։

Լուծույթներ և գրավչանյութեր պատրաստելու տեղին մոտ չթողնել յերեխաններին, ընտանի թոչուններին և կենդանիներին։ Աշխատանքից հետո թույներ պատրաստելու տեղերը փորփռել պարել։

Բնը քահավաքից 15—20 որ առաջ ընդհատել փոշոտումն ու արսկումը։

Թունավորման դեպքում բժիշկ հրավիրել. մինչեւ նրա գալը ոռուժածին տալ հում ձկի սպիտակուց, հում կաթ կամ ջրի և ցուղի խառնորդ (հմուլսիա)։

ԹՈՒՅՆԵՐԸ ԱՊԱԽԵԼԻՄ

Պահեստապետությունը հանձնարարել թունավոր նյութերի հետ ծանոթ անձնավորության։

Թույները պահել կողանքի տակ, զերոյից վոչ ցած ջերմաստիճան ունեցող առանձին չոր շենքի մեջ։

Դյուրավառ թույները (որինակ՝ քլորպիկրինը, ծծմբածխաթինը, ցիանպլավը) պահել բնակելի շենքերից հեռու։

Թույնով զբաղված յուրաքանչյուր արկղ, սնդուկ, տակառ, շենքերը և ունենա մակագիր, վորտեղ գրված լինեն թույնի պրիվ անունը, կշիռը և պահեստ մտնելու ժամանակը։

Թույները պահել խցանված ձևով։ Թույն պարունակող ապակե շենքը պահել զդուռ լցրած՝ դործած զամբյուղներում։

Թույները չպահել ուրիշ առարկաների հետ միասին, մանավանդ սննդամթերքների հետ։

Թույները դուրս տալու համար ունենալ առանձին կշեռքներ և գոգաթիակներ։

Պահեստում պետք է լինեն խալաթներ, ոճառ, սրբիչ, լվացարան։ Աշխատանքից հետո ձեռքերը պետք է խնամքով լվանալ։ Կողմանակի մարդկանց, յերեխաններին, ընտանի կենդանիներին պահեստ մտնելու թույլ չտալ։

Թույների վրա աշխատել խալաթները հագած, խոկ յեթե թույներն արձակում են փոշի կամ գոլորշիանում են, այն ժամանակ պետք է հակագաղեր հագնել։

Փոշենման թույները փոխադրել չմսասված և լավ խցանված տարայի մեջ: Փոխադրումից հետո պետք է այրել այն ծղոտը կամ խոտը, վորը փոփածք և ծառայել թունավոր նյութերով տարայի համար, սայլը խնամքով ավել ու լվանալ:

Հեղուկ թույները պարունակող ապակե շաքերը փոխադրել ծղոտված կամ խոտով լցրած՝ զործած զամբյուղներում:

Թույների հետ միասին սննդամթերքներ չպեսք և փոխադրել:

ՍՅՈՒԳԻ ԽԱՐՁԵՐ

1. Ի՞նչ միջոցներով են պայքարում բույսերի վնասատուների և հիգանդությունների գել:

2. Ի՞նչ ազրոտեխնիկական միջոցառումներ են կանխում բույսերի վնասառուների և հիգանդությունների տարածումը: Այդ միջոցառումներից գործն է կիրառվում (կարող և և պետք է կիրառվի) ձեր կողմընանառության մեջ (խորհանականության մեջ):

3. Ի՞նչպես են ստորաբաժանվում զյուղատնտեսական բույսերի վնասառուների գեմ պայքարելու վերաբերյալ միջոցառումները:

4. Ի՞նչումն ե վնասառուների գեմ պայքարի մեխանիկական միջոցներ կիրառելու ելությունը:

5. Ի՞նչ մեխանիկական միջոցներ են կիրառվում ձեր կողմնանառության մեջ (խորհանականության մեջ) վնասառուների գեմ պայքարելու համար:

6. Ի՞նչումն ե բույսերի վնասառուների և հիգանդությունների գեմ քիմիական միջոցներով պայքարելու ելությունը:

7. Բույսերի վնասառուների գեմ պայքարելու գործ միջոցներն են ամենից ավելի տարածված:

8. Ի՞նչպես են ստորաբաժանվում թույներն ըստ իրենց ազգեցության վնասառուների վրա:

9. Վեր վնասառուների գեմ են կիրառվում արտաքին և ներքին աղցեցության թույները:

10. Պայքարի ի՞նչպիսի քիմիական միջոցներ են կիրառվում (կարող են կամ պետք և կիրառվեն) ձեր կողմնանառության մեջ (խորհանականության մեջ):

11. Ի՞նչպիսի յեղանակներով են կիրառվում այն քիմիական նյութերը, վորոնցով պայքարում են բույսերի սնկային հիգանդությունների գեմ:

12. Ի՞նչ նախագուշական միջոցառումներ ե հարկավոր պահպանեց թույներով աշխատելիս, նրանց փոխադրելիս և պահելիս:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՊԱԶԾԱՎԻԱՔԻՄԻ «ՊԱՏՐԱՍ ՀՈՔԻ»-Ի ԿՐԾՔԱՇԱԽԻ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. «Պատրաստ ՀՈՂԲ»-ի կրծքանշան ստանալու իրավունք ունեն պաշտպանվելու անդամները:

«Պատրաստ ՀՈՂԲ»-ի կրծքանշան ստանալու համար անհրաժեշտ ե.

ա) Անել հարվածային՝ արտադրության մեջ:

բ) Անել պաշտպանվելով ակտիվ անդամ իր տանը, ֆաբրիկայի, գործարանի, կուտնահանության (խորհանականության) դըպրոցի, հիմնարկության և այլնի ՀՈՂԲ-ի աշխատանքում:

շ) տալ «Պատրաստ ՀՈՂԲ»-ի բոլոր նորմաները, վոր սահմանված են ԽՍՀՄ-ի պաշտպանվելով ի Միության Կենտխորհրդի կողմից:

թ) ունենալ սարքին սեփական հակագուղ:

ե) մաքուր և կարգին վիճակում պահել սեփական բնակարանն ու աշխատանքի վայրը:

զ) առորյա կենցաղում պահպանել անձնական առողջապահության կանոնները:

2. «Պատրաստ ՀՈՂԲ»-ի կրծքանշանը տալիս են Պաշտպանվելով արջանային (քաղաքային) և թաղամասային խորհուրդները, յերբ Պաշտպանվելով սկզբնական կազմակերպությունը ներկայացնում է «Պատրաստ ՀՈՂԲ»-ի նորմաները հանձնողի հաշվառման քարտը, վորը հաստատված և լինում նորմաներն ընդունող հրահանգչի ստորագրությամբ և «Պատրաստ ՀՈՂԲ»-ի նորմաների



նկ. 57. Պաշտպանվելով

«Պատրաստ ՀՈՂԲ»-ի
կրծքանշանը

Ընդունման համար Պաշտպիտաքիմի խորհրդի պատասխանատու անդամի ստորագրությամբ:

3. «Պատրաստ ՀՈՔՊ»-ի նշան ստացողներն ոգտվում են հետևյալ իրավունքներից.

ա) Պաշտպիտաքիմի ՀՈՔՊ-ի գլոբոցներն ու կուրսերը մըտնելիս՝ առավելությամբ.

բ) ընտանիքի անդամների համար հերթից դուրս հակադադ ձեռք բերելու և պաշտպիտաքիմի արհեստանոցներում հակադադը գննելու և վերանորոգելու համար վճարելիս 10 տոկոսանոց զեղչով.

գ) ծրի հաճախելու Պաշտպիտաքիմի ՀՈՔՊ-ի վերաբերյալ ցուցահանդեսները.

դ) ՀՈՔՊ-ի ակումբին անդամագրվելիս անդամավճարի 25 տոկոսանոց զեղչով.

ե) մասնակցելու ՀՈՔՊ-ի վերաբերյալ բոլոր մըցումներին, վոր անց են կացնում Պաշտպիտաքիմի կազմակերպությունները:

«Պատրաստ ՀՈՔՊ»-ի նշան ստանալը վոչ մի պետական արտօնությունների և դրամական վարձատրությունների հետ կտպված չե:

4. «Պատրաստ ՀՈՔՊ»-ի նշանը տրվում է յերկու տարի ժամկետով, վորն անցնելուց հետո կրկնական վերահանձնում և կատարվում և նորմաները չտալու կամ ներկա կանոնադրության 1 պարագրաֆի 1, 2, 4, 5 և 6 կետերից մեկն ու մեկը չկատարելու դեպքում «Պատրաստ ՀՈՔՊ»-ի նշան ունեցողը դրկվում ե այն կրկնու իրավունքից:

5. «Պատրաստ ՀՈՔՊ»-ի կրծքանշանը հետ և վերցվում Պաշտպիտաքիմի շրջնորհրդի վորոշումով այնպիսի փարմունքների համար, վորոնք վարկարելում են Պաշտպիտաքիմի անդամի և խորհրդային քաղաքացու կոչումը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՊԱՏՐԱՍՏ ՀՈՔՊ-Ի ՆՇԱՆԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ (ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՏԿ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

1 նորմա—ՀՈՔՊ վերաբերյալ լինիանուր և եղիկուրյուններ

1. Գիտենալ, թե ինչի համար և հարկավոր բնակչության հակաքիմիական և հակողային պաշտպանությունը և Պաշտպիտաքիմի խնդիրներն այդ բնագավառում:

2. Ողային և ցամաքային քիմիական հարձակման միջոցների մասին և նրանց ազդեցության բնույթի մասին ընդհանուր տեղեկություններ ունենալ, այն եւ ֆուզասային, բնկորային, հրձիկ, քիմիական ոռւմբեր, սավառնակներից թև ցըելը, հրետքիմիրաձգություն, ցամաքային գործիքների կիրառումը՝ թև վայրելը վարակելու համար:

3. Արտաքին նշաններից և հոտից կարողանալ վորոշել իպերիար, լյուիզիար, ֆուգենը, քլորաֆիկինը և աղամախոր:

4. Գիտենալ, թե ինչ և հարկավոր անել ողային տագնապի (ՈՏ), քիմիական տագնապի (ՔՏ) աղդանշան տալու գեպքում՝ հասարակական ոգտագործման վայրերում, դաշտային աշխատանքների ժամանակ, տանը գտնվելիս, փողոցում: Կարողանալ տարբերել ողային և քիմիական տագնապի աղդանշանները, կայուն թև վարակված վայրերի արգելվածքափակումների նշանները:

5. Գիտենալ, թե հրդեհները հանգյնելու ինչպիսի միջոցներ և փորտեղ են գտնվում: Առաջին նորման մշակվում ե 4 ժամում:

2 նորմա—հակաքիմիական պատուականություն

6. Գիտենալ, թե ինչու համար և ծառայում հակագազը հիմնական մասերի գերը, ինչքան ժամանակ և ինչ թև և պաշտպանում նա: Գիտենալ իր հակագազի չափսը:

7. Կարողանալ՝ ա) 5 վայրկյանում ճշշտ հագնել հակագազը, բ) հակագազը հագած ժամանակ 2 ժամ հանգիստ կամ 1 ժամ շաբթման (աշխատանքի մեջ) վիճակում գտնվել. գ) հայտաբերել հակագազի սարքին չմնելը և ոգտվել նրանից մինչ սարքինով փոխանակումը, արտաշնչման կափույրի և սաղավարտ-գիմակի վնասված լինելու դեպքում. դ) հանել հակագազը, չորացնել, ճիշտ ծալել և պայուսակի մեջ դնել. ե) ծխահարման կամերայում մաս 5 ըուղե, վորից 10 վայրկյանից վոչ պակաս հակագազը հանած վիճակում:

8. Գիտենալ, թե ինչպես պետք և սարքավորել ապաստարանը տան մեջ և նրանից ինչպես ոգտվել:

9. Գիտենալ կայուն թև ապագազացման հիմնական միջոցներն ու ձեռքի տակ յեղած ոժանդակ միջոցներով ապագազացնել գյուղատնտեսական մեքենաներն ու ինվենտարը:

10. Կարողանալ գուրս դալ կայուն թն վարակված վայրից՝
ոգտվելով ձեռքի տակ յեղած միջոցներից:

11. Գիտենալ, թե ինչպես պահպանել աննդամթերքները և
տնային գործածության առարկաները թն և ինչ անել թն վա-
րակված առարկաների և մթերքների հետ:

12. Գիտենալ, թե ինչպես պաշտպանել կենդանիներին թն
և ինչպես առաջին ոգնություն ցուց տալ թն տուժած կենդա-
նիներին: 2-րդ նորման մշակվում և 6 ժամում:

Յ Եումա — բժեկա-սանիտարական պահպանության

13. Գիտենալ թունավորման նշանները և կարողանալ փո-
խադարձ ոգնություն ցուց տալ թունավորումների ժամանակ.
ա) հեղուցիչ թն քլորով, ֆոսֆինով. բ) ընդհանուր թունավոր
թն — կապտաթթվով, ածխածնի թթվուտով. գ) գրգռող թն —
աղամսիտով, քլորացետոֆենոնով. դ) մաշկա-պալարային թն —
իպրիտով, լյուիզիտով:

14. Կարողանալ. ա) ոգտվել անհատական սանիտարական և
հակաբարիտային ծրաբներից. բ) մաշկի վրայից վերացնել իպ-
րիտի կաթիլները և լվանալ աչքերը. գ) կատարել արհեստական
շնչառություն ըստ Սիլվեստրի և Շեֆֆերի. դ) 2—3 րոպեյում
գաղարեցնել արյունահոսությունը և վերքը կապել. ե) տուժա-
ծին, վիրավորին, գաղով թունավորվածին փոխադրել յերկու հո-
գով՝ առանց պատգարակի:

Մանրաւրյուն. —Այս անձնավորությունները, փորուք ՊՍՊ-ի առաջին
աստիճանի նորմաները տվել են, բժշկամանիտարական պաշտպանու-
թյան նորմաները չեն տալիս:

3-րդ նորման մշակվում և 4 ժամում:

Դ Եումա — հակահեղեհային պահպանության

15. Գիտենալ, թե ինչ միջոցառումներ պետք ե անցկացնել
վոր հրդեհներ ծագելու վտանգը նվազի իր տանը և արտադրու-
թյան մեջ (դաշտում):

16. Գիտենալ, թե ինչպես պետք ե պայքարել հրձիգ ոռու-
թերից և դյուրավառ նյութերից հրդեհ առաջնալու դեմ:

17. Կարողանալ ոգտվել հրամարիչներով, ավագով և ուրիշ՝
ձեռքի տակ յեղած նյութերով հրդեհները հանդցնելու ժամանակ:
4-րդ նորման մշակվում և 5 ժամում:

Յ Եումա — ՀՈՒՔՊ գյուղում

18. Գիտենալ քիմջոկատի դերն ու խնդիրները:

19. Գիտենալ գյուղատնտեսության տեղական վասառու-
ների, գյուղատնտեսական բույսերի հիվանդությունների և մոլա-
խոտերի դեմ, բնակարանա-վնասատուների գիմ պայքարելու մի-
ջոցները, ինչպես նաև գիտենալ նրանց դեմ պայքարելու համար
կիրառվող թույների հետ վարդելու կանոնները:

20. Իր կոլանտեսության և խորհանտեսության մեջ ըեր-
քատվությունը բարձրացնելու ազրութեանիկական միջոցառում-
ների հիմունքները գիտենալ.

ա) հողերի և գյուղատնտեսական կուլտուրաների գերակշռող
տիպը.

բ) հողի տվյալ տիպի և գյուղատնտեսական կուլտուրաների
համար պարարտանյութեր մտցնելու նորմաները.

գ) պարարտանյութեր մտցնելու ձևերը.

դ) կարողանալ տարբերել հանքային պարարտանյութերը.
5-րդ նորման մշակել և ժամում:



Հականերդիսիային պատապանուրյուն

1. Իր տանը, գաշտում և արագլության մեջ հրդեհների առաջացման ու տարածման վտանգը նվազեցնելու համար ինչ պետք է անել
2. Ինչպես պայքարել հրձիղ ոռումբերի և նրանցից ծագած հրդեհների դեմ
3. Ինչպես ոգտվել ձեռքի հրամարիներով

ՀԵՂԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀՈՒԹՊ Կազմակերպուրյունը կոլեճնեսուրյուններում,
խորհութեանուրյուններում, ՄՏԿ-ներում

1. ՀՈՒԹՊ-ի ինչ միջոցառումներ են կիրառվում «սպառնալի գրություն» մոցնելիս
2. Ինչ պետք է անել ողային տագնապ («ՈՏ») աղդանշանի դեպքում
3. Ինչ պետք է անել քիմիական տագնապ («ՔՏ») աղդանշանի դեպքում
4. Ինչ պետք է անել (ողային տագնապի ավարտի) աղդանշանը տար դեպքում

ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ

Քիմիական ջոկատի դեր, խորդիթեան ու կազմակերպուրյունը զյուկաւմ

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Գյուղաճնեսուրյուն մեջ պարաւանյուրեր գործադրելու
վերաբերյալ ևնդեկուրյուններ

1. Ինչու հողը պարարտանյութերի կարիք և գգում և ինչ և հարկավոր իմանալ նրանց հաջող գործադրության համար
2. Ինչպիսի պարարտանյութեր են լինում
3. Արհեստական պարարտանյութերի ձանաչելը
4. Հողի մեջ արհեստական պարարտանյութեր մտցնելու պայմաններն ու ձևերը
5. Արհեստական պարարտանյութերը մտցնելու նորմաները

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Պայմանական բույսերի վնասառուների յակ
հիվանդուրյունների դեմ

1. Ինչից են առաջանում բույսերի հիվանդությունները և բույսերի ինչ-պիսի մխասառներ են լինում
2. Կանխիչ միջոցառումներ
3. Վայնչացնող միջոցներ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՀՈՒԹՊ Փերաբերյալ ընդհանուրյուններ

Եջ

1. Ինչու համար և հարկավոր աղդանակության հակողային և հակա-քիմիական պաշտպանությունը, Պաշտիսաքիմի խնդիրները ՀՈՒԹՊ գործում
2. Ողային հարձակման միջոցներն ու նրանց ներգործությունը
3. Ցամաքային քիմիական հարձակման միջոցներն ու նրանց ներգործությունը

3

22

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Հառկաժիմիական պատապանուրյուն

1. Հակագաղ ԲՆ, նրա նշանակությունը, կառուցվածքը և գործադրելու յեղանակը
2. ԲՆ հակագաղից ոգտվելու կանոնները
3. Տարրական ապաստարանների հակաքիմիական սարքավորումը և նրանցով ողտվելու կանոնները
4. Ի՞նչպես պաշտպանվել կայուն ԹՆ մաշկի վրա ներգործելուց
5. Ապագազման հիմնական միջոցներն ու յեղանակները
6. Ի՞նչպես սննդամթերքները, խոտը, ջուրը, և անային գործածության առարկաները պաշտպանել ԹՆ ներգործությունից
7. Կենդանիների պաշտպանությունը ԹՆ ներգործությունից

26

34

42

47

49

57

59

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԲԺԵԿԱ-ՍԱԲԻՒԹԵՐԵՎԱԿԱՆ պատապանուրյուն

1. Ինքնողնություն և փոխադարձ ողնություն ԹՆ վասվելու դեպքում
2. Անհատական հակակապրիտային և վիրակապական ծրաբրից ոգտվելը. Արյունահոսությունը գաղարեցնելը և վերքը կապելը: Ողային և քիմիական հարձակման ժամանակ տուժածին փոխադրելը: Արհեստական շնչառություն:

67

70

4. Բույսերի հիվանդությունների գեմ պայքարելու քիմիական յեղա-
նակները 116
 5. Թույներով աշխատելու ժամանակ նախադրուշական միջոցները 116

Հավելվածներ

1. Պաշտամիաբիմի «Պատրաստ ՀՈՒՊ» կբծքանշանի մասին կանոնա-
դըստյուն 119
 2. «Պատրաստ ՀՈՒՊ» նշանի նորմաները գյուղի համար (կոլտնտեսու-
սությունների, խորհունակությունների, ՄՏԿ-ների համար) 120



Պատ. Խմբ.՝ Ա. Բայազյան
 Տեխ. խմբ.՝ Խ. Այվազյան
 Սբբագրիչ՝ Գաբ. Հակոբյան
 Քլամիւտի լիազոր № 1190, հրատ. 436, պատ. 481, տիրագ. 15000
 Հանձնված է արտադրության 29 մայիսի 1937 թ.
 Ստորագրված է տպհելու 25 հունիսի 1937 թ.

Գյուղերատի ազարտն, Ցերևան, Նալբանդյան 11.

ՀՀ Ազգային գրադարան



NL0278945

ԿՐԵԱ 2 Փ.
ԿԱԶՄՐ 1 Փ.

842

13 360



Կոլխզնику օ պրотивовоздушной и противо-
химической обороны

Сост. А. Мальшинский

Сельхозгиз

Ереван

1937